

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՅԱՌԱԶՆԱՐԱՅՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅ

Երեքշաբթի, 20 օգոստոս 2019-ին, Շամ Թայյազ կայքը յայտնեց, որ Սուրիոյ նախագահ Պաշշար պլ Ասատ հանդիպում ունեցած է Ռուսիոյ խորհրդարանի անդամ, ռուսական Զին Չինուորներու Կազմակերպութեան փոխնախագահ Տիմիթրի Սապլենի եւ անոր ընկերակցող պատուիրակուր-



եան հետ: Զանդիպումին ընթացքին Ասատ Սուրիոյ մէջ քաղաքական եւ զինուորական իրավիճակին դրական փոփոխութիւնները ներկայացուցած է: Սոյն կազմակերպութեան տեղեկատուական գրասենեակը հանդէս եկած է հաղորդագրութեամբ մը, ուր ըսուած է. «Նախագահ Ասատ ներկայացուց Սուրիոյ քաղաքական եւ զինուորական զարգացումները: Ան յայտնեց, որ սուրիական բանակը յառաջխաղացք արձանագրեց իսկ Շէյխուկ ռազմավարական շրջանին ուղղութեամբ, որուն յարակից կը գտնուին ռուսական ուժերը: Ահաբեկիչները դէպի Թուրքիա փախուստ կու տան»:

Սապլեն եւ պատուիրակութեան անդամները բարձրորէն գնահատած են սուրիական բանակին ձեռքբերումները, յատկապէս Իտլիպի արուարձանին մէջ, աւելցնելով, որ այս յաղթանակները ի վերջոյ պիտի նպաստեն սուրիական տարածքներուն ամբողջական ազատագրման:

ՀՅՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամուլսարի շահագործման առաջնութեամբ վերջին օրերուն ծաւալող հանրային լարուածութեան պատճառը գործող իշխանութիւններուն հակասական յայտարարութիւններն են, չկշռադատուած գործողութիւնները, ինչպէս նաեւ հարցին շուրջ հասարակութեան լայն շրջանակներու մէջ ձեւաւորուած մեծ սպասումներուն համարժեք քայլերու բացակայութիւնը:

Առաջնահերթութիւն համարելով ազգային եւ պետական շահը, հանրային համերաշխութիւնը, բնական պաշարներու անվտանգ շահագործումը, շրջակայ միջավայրի կենսաբազմազանութեան պահպանումն ու երկրի կայուն զարգացումը ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինը կը յայտարարէ.

-ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինը խիստ մտահոգի կը համարէ այն իրողութիւնը, որ հրապարակուած եզրակացութիւնները բաւարար համոզում եւ վստահութիւն չեն ներշնչեր ինչպէս հանրային, այնպէս ալ մասնագիտական շրջանակներուն:

-Իշխանութիւններուն կողմէ՝ ուղղեմք հրապարակուած մասնագիտական եզրակացութիւնը չդիտարկել որպէս հանքի շահագործման վերջնական հիմնաւորում:

Կարելիութեամբ հարցին հանրային հնչեղութիւնը, երկրի ընկերային-տընտեսական եւ բնապահպանական հեռանկարի վրայ վերջինիս հնարաւոր լրջագոյն ազդեցութիւնն ու վտանգները, նպատակայարմար կը գտնենք՝

-Հանրային եւ մասնագիտական լրացուցիչ քննարկումներուն իբրեւ արդիւնք հասնիլ համոզիչ լուծումներու,

-Վերականգնել առողջ երկխօսութիւնը մասնագիտական փորձագիտական շրջանակներու հետ,

-Հանրաքուէի ճանապարհով հասնիլ պետութեան շահերէն բխող եւ հանրութեան կողմէ ընդունելի որոշման:

**ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմին
21 օգոստոս 2019**



Ս. ԱՍՏՈՒՍԱՍԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԱՐԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԾՈՎԱԾ

Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան. «Մենք ուրախ եւ հպարտ ենք, որ Քեսապը պահած է իր ազգային դիմագիծը: Քեսապահայը պահած է իր մշակոյթը, մայրենի լեզուն եւ կը փոխանցէ զանոնք նոր սերունդին»
Ա) ԺԱՄԱՆՈՒՄ ԼԱԹԱՔԻՍ

Ուրբաթ, 16 օգոստոս 2019-ի յետմիջօրէին Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Եպս. Չօպուեան իր պատուիրակութեամբ ժամանեց Լաթաքիա, ուր դիմաւորուեցաւ համայնքի հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վազգէն Բիւյ. Զեօշկերեանին, թաղականութեան ատենապետին՝ տիար Աւօ Կարպուշեանին, եւ անդամներուն կողմէ:



Սրբազան հայրը Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարեց կանոնական աղօթք, ապա եկեղեցւոյ դահլիճէն ներս հանդիպում ունեցաւ տէր հօր եւ թաղականութեան հետ:

Բ) ՈՒՍՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՐՎԱՄՈՅԻ Ս. ԱՍՏՈՒՍԱՍԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաբաթ, 17 օգոստոսին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը առաւօտուն հասան Արամօ:



Պատուիրակութեան մաս կը կազմէին Կրօնական Ժողովի անդամ Տէր Մաշտոց Աւագ Զահանայ Արապաթլեան, Լաթաքիոյ հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Զահանայ Զեօշկերեան, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղականութեան ատենապետ Աւօ Կարպուշեան եւ թաղականութեան ներկայացուցիչներ:

Եկեղեցւոյ մուտքին սրբազան հայրն ու պատուիրակութիւնը դիմաւորուեցան Արամոյի եւ Ղընեմիէի թաղականութեանց եւ դպրաց դասուն, ժողովուրդին եւ շրջանի պետական պատասխանատուներուն կողմէ:

Տեղի ունեցաւ աղի ու հացի օրհնութիւն:

Օրուան պատարագիչն էր՝ Լաթաքիոյ Հոգեւոր Հովիւ Տէր Վազգէն Զահանայ Զեօշկերեան: Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզեց եւ օրուան պատգամը ուղղեց հայերէնով ու արաբերէնով՝ շեշտելով ուխտին եւ անոր հաւատարմի մնալու կարեւորութիւնը:



Ապա ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետին օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցեց ներկաներուն:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց նաեւ Սուրիոյ նախագահին եւ սուրիական քաջարի բանակին, որոնց շնորհիւ խաղաղութիւնը վերականգնեցաւ եւ մենք կարելիութիւն ունեցանք ուխտի գալու Արամօ:

Սրբազան հայրը մաղթեց, որ Սուրիոյ բոլոր շրջանները ազատագրուին, ժողովուրդը վերադառնայ իր բնօրանը եւ կարելիութիւն ունենանք ուխտագնացութիւն կատարելու նաեւ դէպի Եգիպտոս եւ Ղընեմիէ:

Շաբ.՝ Էջ 4 ➔

Խմբագրական

ՍՈՒՐԻՈՅ ԱՖԱՆՆԵՐՈՒ ՆԱՅՈՒԹԻՒՆԸ

Ս. Աստուածածնի Վերափոխման տոնին առիթով տեղի ունեցած ուխտագնացությունները դեպի Զեսապ եւ Արամո առիթ են լուսարձակի տակ առնելու յիշեալ գիւղերու եւ մերձակայ ավաններու հայութեան պարզած պատկերն ու դիմագրաւած մարտահրաւերները:

Զեսապի հայութեան թիւին նուազումը արգելք չէ դարձած երբեք գիւղի ազատագրումն ենք վերականգնումի աշխատանքներու ծաւալումին: Ազգային կեդրոններ, եկեղեցիներ վերանորոգուած ու վերագտած են իրենց նախկին կենսունակութիւնը: Տօներ, միութենական եւ դպրոցական ձեռնարկներ յաճախ կը կազմակերպուին՝ կենսունակ պահելու համայնքը:

Բնակչութիւնը, սակայն, տնտեսական լուրջ դժուարութիւններ կը դիմագրաւէ, յատկապէս շրջանի ապահովական վիճակին, Հալեպ-Լաթաքիա մայր ճամբուն ջօզտագործուելուն, երիտասարդ տարրին նուազումին, ինչպէս նաեւ հողի բերքին վաճառքէն եւ զբօսաշրջութենէն ապահովուող եկամուտին նուազեցման հետեւանքով:

Ուստի միևնույն երկրի պատերազմական հետեւանքներուն ամբողջական վերացումը, անհրաժեշտ է նեցուկ կանգնիլ շրջանի հայ բնակչութեան, որպէսզի ան պահպանէ իր պատմական դերն ու դիմագիծը եւ կարենայ նոր ծրագիրներ մշակել յետպատերազմեան շրջանին, վստահելով յատկապէս երիտասարդ տարրին:

Բնակչութեան տնտեսական վիճակի բարելաւման կողքին, անհրաժեշտ է մտածել նաեւ հայ բնակչութեան թիւի աճին մասին եւ համապատասխան քայլերու դիմել խթանելու երիտասարդ զոյգերու ամուսնութիւնն ու այլազան միջոցներով քաջալերելու բազմազաւակ ընտանիքները:

Արամոյի բնակչութիւնը եւս իր պատմական ներկայութեամբ սուրիահայ համայնքի կարեւոր բաղադրիչներէն մէկը կը համարուի, նոյնն է պարագան Ղընեմիէի եւ Եագուպիէի հայութեան: Վերջիններս ցարդ կարելիութիւն չունին վերադառնալու իրենց բնօրրանը եւ տարտղնուած կը մնան զանազան շրջաններու մէջ:

Տեր Չօրը եւս դատարկուած է հայութենէ: Տեր Չօրի հայ ընտանիքներուն վերադարձի յոյսերը ցարդ աղօտ կը մնան:

Առանձին ուշադրութեան արժանի են նաեւ Սուրիոյ հիւսիսային շրջանի եւ Ճեզիրէի հայութեան դիմագրաւած մարտահրաւերները:

Այս միջոցին, սակայն, տուեալ շրջաններու մեր մշակութային, պատմական կառոյցներուն տիրութիւն ընելը հրամայական պահանջ է, յատկապէս որ Սուրիոյ պետութիւնը ամէն կերպ կը զօրակցի այդ շրջաններուն հայկական դիմագիծը պահպանելու եւ սուրիական ընկերութեան հիւսուածքը քայքայումէ զերծ պահելու համար:

Ակներեւ էին Վերափոխման տոնին առիթով պետական ներկայացուցիչներուն հայութեան կարեւոր դերին անդրադարձն ու հայկական ձեռնարկները քաջալերելու անվերապահ մօտեցումը:

Միևնույն պատերազմի վերջնական ավարտն ու սուրիական ամբողջական տարածքներու ազատագրումը, պինդ պէտք է մնալ ու շարունակել այլընտրանքներ որոնելով ամէն միջոց ի գործ դնել՝ վերեւ յիշուած դժուարութիւնները յաղթահարելու եւ տուեալ շրջաններու հայութեան նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնելու համար:

Կը հաւատանք, սուրիական բանակին մարտնչումներն ու վերջին օրերու յառաջխաղացքը կը վկայեն նաեւ, որ պիտի ազատագրուին Սուրիոյ բոլոր շրջանները: Եագուպիէի, Ղընեմիէի հայութիւնը մօտ ապագային պիտի վերադառնայ իր բնօրրանը ու ծաղկեցնէ իր արտն ու պարտեզը:

Կը հաւատանք, որ ուշ կամ կանուխ պիտի վերաշխուժանան մեր պատմական վայրերը: Մինչ այդ, սակայն, Էական է մարդկային ուժին պահպանումն ու վերականգնումը, այլապէս հայկական դիմագիծ ունեցող այս գիւղերուն եւ ավաններուն դիմագիծը կրնայ աղաւաղուիլ, իսկ հայութիւնը տարտղնուիլ:

«Գ.»

-Երկուշաբթի, 19 Օգոստոս 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական բանակը կը շարունակէ զինուորական գործողութիւնները «Ճապիաթ ալ Նուսրա»-ի գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն եւ անոնց դաշնակից ուժերուն դէմ: ՍԱՆԱ-ի թղթակիցը հաղորդեց, որ սուրիական բանակը յառաջխաղացք արձանագրած է հան Շէյխունի Զֆրէտուն եւ Սապադիէ արուարձաններուն մէջ, որուն հետեւանքով ահաբեկիչներ նահանջած եւ մեծ կորուստներ կրած են: Աղբիւրին համաձայն, սուրիական բանակը կը իրթիռակոծէ նաեւ Իտլիպի հարաւային Զաֆարսաճնա եւ Նըքըր շրջանները՝ նահանջի մատնելով ահաբեկիչները: Միւս կողմէ, հան Շէյխունի արեւելեան շրջանին մէջ, բանակը բռնու մարտեր կը մղէ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն դէմ, պաշարելու հան Շէյխունը:



Ժամեր անց, զինուորական աղբիւր մը հաղորդեց, որ սուրիական բանակը վերահսկողութեան տակ առաւ հան Շէյխունի արեւելեան բաժինը գտնուող Թարիի ռազմավարական գիւղը եւս: Աղբիւրը հաստատեց, որ սուրիական բանակը «Ճապիաթ ալ Նուսրա» գինեալ ահաբեկչական խմբաւորման դէմ բռնու մարտեր մղելէ ետք իր վերահսկողութեան տակ առաւ նաեւ Նմըր եւ Սիրիաթէլ շրջանները: Աղբիւրը վկայակոչելով սուրիական ընդդիմութեան աղբիւրներու յայտարարութիւնը յայտնեց, որ ահաբեկիչները քաշուեցան հան Շէյխունէն եւ հիւսիսային Համայի կարգ մը գիւղերէն, մինչ սուրիական բանակը կը շարունակէ յառաջանալ այդ շրջաններուն մէջ:

-Երկուշաբթի, 19 Օգոստոս 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ գէներալ բեռնաւորուած թրջական հրասայլ մը սուրիական սահմանը հատեց հասնելով հան Շէյխուն, որպէսզի պարտութեան մատնուող «Ճապիաթ ալ Նուսրա»-ի գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն օգուտեան համար: Այս առիթով Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ յիշեց, որ Սուրիա խստիւ կը դատապարտէ ապօրինի այս արարքը, զայն համարելով թրջական վարչակարգին կողմէ գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն ցուցաբերուած աջակցութիւն: Նախարարութիւնը հաղորդագրութիւնը եզրափակեց ըսելով. «Սուրիա կը շեշտէ, որ թրջական համակարգին ցուցաբերած թշնամական ընթացքը արգելք պիտի չհանդիսանայ սուրիական բանակին՝ հան Շէյխունի կամ այլ շրջաններու մէջ ահաբեկչութեան դէմ դնելու եւ սուրիական հողերը ազատագրելու»:



-ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մնայուն բանագնաց դոկտ. Պաշար ալ Ճաֆարի ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի «միջազգային անվտանգութեան եւ խաղաղութեան պահպանում» խորագիրը կրող նիստին լուսարձակի տակ առաւ թրջական եւ ամերիկեան բռնարարքներն ու ոճիրները դադրեցնելու անհրաժեշտութիւնը:

Ճաֆարի անդրադառնալով Թուրքիոյ ահաբեկիչներուն ցուցաբերած աջակցութեան, ըսաւ. «Անցնող օրերուն ընթացքին, Էրտողանի վարչակարգը տարբեր հպատակութիւն ունեցող ահաբեկիչներ թրջական սահմանէն Իտլիպ ուղղեց՝ «Ճապիաթ ալ Նուսրա» գինեալ ահաբեկչական խմբաւորման զօրավիճակ կանգնելու համար: Անոնց կողքին Իտլիպ մուտք գործեցին նաեւ զէնքերով բեռնաւորուած հրասայլեր», անելցնելով, որ ոմանք քաջ իմանալով այս բոլորը, ահաբեկիչները «չափաւոր ընդդիմութիւն» կ'անուանեն:



Ճաֆարի եզրափակելով ըսաւ. «Ժամանակը հասած է, որ տարածաշրջանի ժողովուրդը, աշխարհի այլ ժողովուրդներուն նման, ապրի խաղաղութեան եւ ապահովութեան մէջ: Ժամանակը հասած է, որ Միջին Արեւելքը վերականգնէ իր դերը, որպէս մարդկութեան քաղաքակրթութեան ռահ-վիրայ, սակայն այս բոլորին իրականացումը ձեր նիստերէն կը պահանջէ անելի լուրջ մօտեցում՝ տարածաշրջանի անկայուն իրավիճակին վերջ տալու համար»:

-Զորքշաբթի, 21 Օգոստոս 2019-ին, սուրիական վառելանիւթի ընկերութիւնը յայտնեց, որ Սուրիոյ բնակչութեան մագուրթի բաշխումը պիտի սկսի 1 Սեպտեմբեր 2019-ին:

Սուրիոյ վառելանիւթի ընկերութեան ընդհանուր տնօրէն Մուսթաֆա Հասուիէ ՍԱՆԱ-ին հաղորդեց, որ առայժմ իւրաքանչիւր ընտանիքի 200 լիթր մագուրթ յատկացուած է:



Հասուիէ յայտնեց, որ օրական դրութեամբ մէկ միլիոն եւ 200.000 լիթր մագուրթ պիտի յատկացուի բնակչութեան:

Լուրեր Հայաշխարհին

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ ՅԱՅՏՆԵՃ, ԹԵ ԱՄՈՒՍԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

Երկուշաբթի, 20 Օգոստոսի առաւօտեան, Երեւանի Ազատութեան հրապարակէն դէպի Բաղրամեան 26 հասած Ամուլսարի հանքի շահագործման դէմ բողոքող ցուցարարները շարունակեցին իրենց բուռն ցոյցը՝ ընկերակցելով Ջերմուկէն ինքնաշարժներով երթ կազմակերպած քաղաքացիներուն:

Միւս կողմէ, գուգահեռաբար տեղի ունեցաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաւիրած հանդիպումը, որուն մասնակցեցան կառավարութեան անդամներ, շահագործող նախարարութիւններու ղեկավարներ, Ջերմուկ համայնքի աւագանիի անդամները, Գորայք, Չառիթափ, Ջերմուկ համայնք-



ներու բնակիչները, կրթական եւ առողջարանային հաստատութիւններու ներկայացուցիչներ, բնապահպաններ: Կառավարութեան հասարակութեան հետ կապերու վարչութեան համաձայն, վարչապետը ներկայացուց Ամուլսարի հանքի ծրագիրին առնչութեամբ յարուցուած քրեական գործի ծիրին մէջ իրականացուած աշխատանքները, անդրադարձաւ միջազգային փորձաքննութեան եզրակացութեան եւ անոր առնչուող վերլուծումին:

Ժամեր անց «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան գրասենեակին մէջ տեղի ունեցաւ հանդիպում վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ «Իմ Բայլը» խմբակցութեան պատգամաւորներուն միջեւ:

Քննարկումէն երկու ժամ ետք վարչապետի մամուլային բանբեր Վլատիմիր Կարապետեան լրագրողներուն հետ զրոյցելով դիտել տուաւ, որ վարչապետը ըսած է, թէ ներկայիս չկան հիմքեր, որ «Լիտիան» ընկերութիւնը դադարեցնէ հանքի շահագործումը: Պատասխանելով այն հարցումին, որ բնապահպանները չեն հաւատար կատարուած փորձաքննութեան արդիւնքներուն, արդեօք նոր քննութիւն պիտի կատարուի, Կարապետեան ըսաւ, թէ ներկայիս դադարեցման կարիք չկայ:

Մինչ այդ խումբ մը քաղաքացիներ, բնապահպաններ ու լրագրողներ Ազգային ժողով եւ քննարկում կատարել Ամուլսարի նիւթով, կացութիւնը հետզհետէ լարուեցաւ, եւ ոստիկանները դարպասները փակեցին ցուցարարներուն դէմ, անկէ ետք ոստիկաններուն ու ցուցարարներուն միջեւ հրմշտուք տեղի ունեցաւ, ցուցարարները գետին ստան ու փակեցին ճամբան. ճամբան բանալու փորձի ընթացքին լարուած վիճակը սրեցաւ, եւ 6 ցուցարարներ բերման ենթարկուեցան: «Ասիկա ո՛չ միայն Ջերմուկի, այլեւ ամբողջ Հայաստանի խնդիրն է, ասիկա համաժողովրդական խնդիր է: Այս ամէնը կը կատարուի հայ ժողովուրդին համար», պոռագին ցուցարարները:

Լրագրողներուն հետ զրոյցի մը ընթացքին շերմուկցիները ըսին, որ եթէ Ամուլսարի խնդիրին լուծում չտրուի, կառավարութիւնը որոշէ, որ հանքը պիտի շահագործուի, իրենք պիտի չնահանջեն ու պիտի փակեն բոլոր ճամբաները: «Եթէ Նիկոլը մերժեց Սերժին, ուրեմն ինքնաբերաբար պետք է մերժէ Սերժին կողմէ եկած բոլոր բացասական ծրագիրները», ըսաւ ցուցարարներէն մէկը:

Երեկոյեան, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան շուրջ 1 ժամ 17 վայրկեան տւեալ Ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակման աւարտին յայտարարեց, որ նպատակայարմար կը գտնէ շարունակել հանքի շահագործումը:

«Մեր կառավարութեան, պետութեան, ժողովուրդի, երկրի շահերն է, որ մենք օրինական, մեր կողմէ առաջադրուած պայմանը եւ ժողովուրդին վստահութեան քուէն ստացած պայմանը բաւարարենք, այսինքն՝ առիթ տանք, որ Ամուլսարի հանքը շահագործուի», յայտնեց Փաշինեան՝ աւելցնելով, որ այդ եզրակացութեան հասաւ ներկայ դրութեամբ իր մօտ առկայ տեղեկատուութիւններուն լոյսին տակ:

Ըստ վարչապետին, Ամուլսարի հանքը պիտի փակուի, եթէ պարզուի, որ անիկա վնաս կը հասցնէ Սեւանայ լիճին, Ջերմուկի ջուրերուն եւ բնութեան այլ տարրերուն:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԵՐԱՅՈՒՅ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐՎԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

«Անթիլիաս».-Կիրակի, 8 Յունիս 2019-ին, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովը առաջնորդ ընտրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն Գերշ. Տ. Մասիս Եպս. Չօպուեան:

ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս Ազգային Երեսփոխանական Ժողովին ուղղած իր հայրապետական գիրով վաւերացուց առաջնորդի ընտրութիւնը եւ յաջողութիւն մաղթեց նոր ընտիր առաջնորդ սրբազան հօր իրեն վըստահուած առաքելութեան մէջ: Միաժամանակ, Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց նախորդ առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանին, անցնող 15 տարիներուն, իր նուիրեալ ծառայութեան համար:



Յայտնեք, որ Շահան սրբազանը Անթիլիասի Մայրավանք վերադառնալով՝ ստանձնեց մատենադարանապետի պաշտօնը:

ԱՐՅԱՆԻ ՆԱԽԱՎԱՅԸ ԱՆՃԷՅ ԲԱՍՓՐՉԻՔԻ ՀԵՏ ԲՆՆԱՐԿԱԾ Է ՍԱՀՄԱՆԻ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԱՌՆՉՈՒՂ ՇԱՐՔ ՄԸ ՀԱՐՅԵՐ

«Արմէնփրես».- Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեան 20 Օգոստոսին ընդունած է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անճէյ Բասփրչիքը: Հանդիպման ընթացքին քննարկուած են Արցախի եւ Ատրպէյճանի զինուած ուժերու շփման գիծին վրայ տիրող իրավիճակին առնչուող շարք մը հարցեր:



ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Ազգ. Միացեալ Նախակրթարանը 2019-2020 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունի.


- 1.- Անգլերէնի դասատուի
- 2.- Ինքնաշարժի վարիչի
- 3.- Ինքնաշարժի աշակերտութեան հսկող ուսուցչուհիի
- 4.- Տնտեսուհիի

Հետաքրքրուողները կրնան իրենց դիմումագիրները ներկայացնել վարժարան մինչեւ 23 Օգոստոս 2019:

Հոգաբարձութիւն
Ազգ. Միացեալ Վարժարանի

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ՎԱՆԱՅ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2019-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին ԱՄԺ Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻ...

Սկիզբ՝ էջ 1

Աւարտին տեղի ունեցաւ խաղողի եւ մատաղի օրհնութիւն: Արարողութիւնը վերջ գտաւ «Կիլիկիա» մաղթերգով:

Արարողութիւնէն ետք, սրբազան հայրը հանդիպում ունեցաւ Արամիոյի եւ Ղընէմիէի թաղականութեանց հետ:

Գ) ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ Ս. ԳԵՌՈՎ ՎԻՍՍՈՐ ՍԱՏՈՒ

Արամօ գիւղին հիւսիսային կողմը, բարձունքի մը վրայ կանգնած է Ս. Գերով վիմափոր մատուռը:

Այս մատուռը եղած է հայերու, ինչպէս նաեւ օտարազգիներու ուխտավայր:

Շաբաթ, 17 Օգոստոսին, Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդն ու անոր ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Ս. Գերով մատուռ եւ աղօթեցին երկրի խաղաղութեան ու ժողովուրդին ապահովութեան համար:

Դ) ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԱԹԱՔԻՈՅ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Շաբաթ, 17 Օգոստոսի յետմիջօրէին, Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Լաթաքիոյ Նահանգապետ Իպրահիմ Խըտըր ալ Սալէմին:

Առաջնորդ Սրբազան Յայրը շնորհաւորեց Նահանգապետը Ատիայի տօնին առիթով:

Խօսելով սուրիահայութեան մասին, սրբազան հայրը շեշտեց, որ Սուրիան եւ անոր ժողովուրդը Յայոց Յեղասպանութեան տարիներուն գրկաբաց ընդունեցին հայ ժողովուրդին զաւակները: Սուրիահայութիւնը կառնած մնաց սուրիական հայրենիքին, սատարելով անոր բարգաւաճման, ի պահանջել հարկին արիւն թափելով անոր պաշտպանութեան համար:

Ապա հաստատեց, որ Սուրիոյ Նախագահը երաշխիքն է սուրիական ընկերութեան բոլոր բաղադրիչներուն խաղաղ գոյակցութեան:

Այնուհետեւ սրբազան հայրը Նահանգապետին ներկայացուց Լաթաքիա, Արամօ եւ Զեսապ իր այցելութեան մանրամասնութիւնները:

Իր կարգին, Նահանգապետը ներկայացուց Նահանգապետարանի ծառայողական աշխատանքները, ապա լուսարձակի տակ առաւ սուրիական ընկերութեան անբաժան մէկ մասնիկը հանդիսացող սուրիահայութեան շիւհի դերակատարութիւնը երկրի զարգացման մէջ:

Ե) ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԸ ԶԵՍԱՊԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՑ ՄԷՋ

Հանդիսապետութեամբ Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Կիրակի, 18 Օգոստոս 2019-ին, Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Զեսապահայ, ինչպէս նաեւ Դամասկոսէն, Յալէպէն, Լաթաքիայէն ժամանած հաւատացեալներու եւ Բերիոյ



Յայոց Թեմի Վարչութեան ներկայացուցիչ Գուրգէն Գալուստեանի, տղթ. Ռուբէն Գերովեանի եւ ՅՄԸՄ-ի Զեսապի արի-արեւոյններուն ներկայութեան, մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ:

Օրուան պատարագիչն էր Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:

Պատարագի երգեցողութիւնը կատարեց Զեսապի դպրաց դասը: Խորանին սպասարկեցին Տէր Նարեկ Զահանայ Չերէնցեան եւ Տէր Մաշտոց Աւագ Զահանայ Արապաթեան:

Պատարագի աւարտին սրբազան հայրը յաւուր պատշաճի քարոզեց եւ օրուան պատգամն ու խորհուրդը ուղղեց հաւատացեալ ժողովուրդին:

Անդրադառնալով Ս. Աստուածածնայ կեանքին, սրբազան հայրը յիշեց, որ ան ապրեցաւ խոնարհ ու համեստ կեանք մը: Աստուած տեսնելով Մարիամի պարզութիւնն ու սրբութիւնը, բոլոր կիներուն մէջէն ընտրեց խոնարհը, սուրբը, համեստը՝ որպէսզի ան ըլլայ Զրիստոսի Մայրը: Ապա յայտնեց, որ այս տօնը կը տօնենք ընդգծելու կարեւոր երեւոյթներ, որոնցմով յատկանշուեցաւ Մարիամ:

Առաջինը այն է, որ Մարիամ սկիզբէն իր հոգեւոր աչքերով տեսաւ Աստուծոյ իրեն ընծայած նուիրական ծրագիրը: Մենք եւս, որպէս հաւատացեալներ, պէտք է մեր հաւատքի գօրութեամբ, հոգեւոր աչքերով կարենանք տեսնել Աստուծոյ մեզի ընծայած բարիքները, արժանիքները եւ գանտըք հարստացնելով բաշխենք նաեւ մեր նմաններուն:

Երկրորդ՝ Մարիամ ոչ միայն տեսաւ, այլեւ մասնակից դարձաւ գործ-

նապէս Աստուծոյ իրեն վստահած փրկագործական ծրագիրին եւ Զրիստոսի հետ տագնապեցաւ: Արդ, քրիստոնեայ հաւատացեալը եւս Աստուծոյ պարգեւները տեսնելով պէտք է բաւարարուի, այլեւ տառապանքի ու չարչարանքի ընդմէջէն ցոյց տայ, որ գործնապէս մասնակից է քրիստոնեական հաւատքի տարածման:

Երրորդ՝ Մարիամ տօնեց Ս. Յարութեան տօնը, ցնծութեան տօնը եւ Աստուծոյ անոր վստահած առաքելութիւնը Զրիստոսի Յարութեամբ իրականանալի դարձաւ:

Նոյնն է պարագան քրիստոնեայ հաւատացեալին: Երբ կը կրենք Զրիստոսի խաչը գիտակցօրէն, հաւատքով եւ աղօթական կեանքով, կը հասկնանք, որ խաչը, մահը վերջակէտը է են հանդիսանար քրիստոնեայ հաւատացեալին կեանքին, որովհետեւ քրիստոնեայ հաւատացեալը իր խաչելութեան աւարտին, իր մահէն ետք անմահութիւնը պիտի ճաշակէ: Այս կը թելադրէ քրիստոնեական հաւատքը:

Ապա սրբազան հայրը կոչ ուղղեց մեր եկեղեցիներուն եւ պատմական կառոյցներուն պաշտպան դառնալու:

«Մենք ուրախ եւ հպարտ ենք, որ Զեսապը պահած է իր ազգային դիմագիծը: Զեսապահայը պահած է իր մշակոյթը, մայրենի լեզուն եւ կը փոխանցէ գանտըք նոր սերունդին», ըսաւ Գերշ. Տէր Մասիս:

Գերշ. Սրբ. Յայրը աղօթք բարձրացուց առ Աստուած, որ պահէ, պահպանէ ու ծաղկեցնէ Սուրիական Յայրենիքը եւ ազատագրէ բոլոր այն շրջանները, ուր կ'ապրի Սուրիոյ ժողովուրդը, կ'ապրի նաեւ հայութիւնը: Օրինակ բելլերով Եագուպիէն, սրբազան հայրը մաղթեց, որ ան ազատագրուի եւ մենք կարենանք կրկին ուխտագնացութիւն կազմակերպել դէպի Եագուպիէ:

Եզրափակելով Առաջնորդ Սրբազան Յայրը ըսաւ, որ եկած ենք Զեսապ, շեշտելու որ ամէն ձեւով գօրակից ենք ձեր հոգեւոր, ազգային, կրօնական առաքելութեան՝ միասնաբար ծաղկեցնելու Բերիոյ Յայոց Թեմը:

Աւարտին, սկառուները հաւատացեալներուն նուիրաբերած խաղողը բերին Ս. խորան, ուր ձեռամբ սրբազան հօր, տեղի ունեցաւ խաղողի եւ բկեղի օրհնութիւն:

Արարողութիւնը վերջ գտաւ «Կիլիկիա» մաղթերգով: Ապա թափօրը, սրբազան հօր գլխաւորութեամբ ուղղուեցաւ եկեղեցւոյ շրջափակ, ուր ՅՄԸՄ-ի փողերախումբը հնչեցուց ազգային-յեղափոխական երգեր, հարըստացնելով տօնական մթնոլորտը:

Կիրակի, 18 Օգոստոս 2019-ի յետմիջօրէի ժամը 5:00-ին, Եսկիւրանի Ս. Աստուածածին մատրան մէջ, հաւատացեալներու ներկայութեան կատարուեցաւ աղօթիւնքը: Ապա տեղի ունեցաւ ոչխարներու գնումը:

Զ) ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ ԵՅԵԿԵՂԵՑ ԶԵՍԱՊԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, Զեսապ ուխտի իր այցելութեան շրջագիծէն ներս, Կիրակի, 18 Օգոստոսի երեկոյեան ժամը 6:00-ին, Վերափոխման տօնին առիթով այցելեց նաեւ Զեսապի հայ Կաթողիկէ Համայնքի ժողովրդապետութիւն:

Սրբազանը դիմաւորուեցաւ Հոգեշնորհ Յայր Նարեկ Վարդապետ Լուիսեանի կողմէ: Հանդիպումին ներկայ էին նաեւ հայ կաթողիկէ համայնքի ներկայացուցիչներ, ժողովականներ:

Ժողովրդապետը իր ողջոյնի խօսքը արտասանեց, բարի գալուստ մաղթելով ներկաներուն:

Սրբազան հայրը իր կարգին ողջունեց Զեսապի հայ համայնքներու ներկայացուցիչներուն գործակցութեան մթնոլորտը եւ միասնական կեցուածքները:

Է) ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ ԵՅԵԿԵՂԵՑ ԶԵՍԱՊԻ ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Երկուշաբթի, 19 Օգոստոս 2019-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան այցելութիւն մը շնորհեց Յայ Աւետարանական Համայնքի Զեսապի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ:

Պատուելի ժիրայր Ղազարեան դիմաւորեց սրբազան հայրը, որ եկեղեցի մուտք գործեց Տէրունական եւ Պահպանիչ աղօթքներով, որմէ ետք Պատուելի բարի գալուստի խօսք արտասանեց:

Այնուհետեւ սրբազան հայրը իր ողջոյնի խօսքով բարձրօրէն գնահատեց Զեսապահայութիւնը, անոր կամքը, հաւատարմութիւնը հողին եւ Զեսապի մէջ տեղի ունեցած վերականգնումի աշխատանքները: Գերշ. Տէր Մասիս մաղթեց, որ աշխարհափիւռ Զեսապահայերը իրենց նիւթական եւ բարոյական ներդրումը ունենան Զեսապի վերականգնումի աշխատանքներուն:



ՄԱՐԴԱՊՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՐՕՏԻ ՆՈՐ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԸ - Բ.

ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ՝ ԱՆՑԵԱԼԻՆ



Ս. Մահսերճեան

Արդի արհեստագիտութիւնը՝ իր թուայնացեալ ու համակարգչային բարիքներով, վերջին տասնամեակներուն արագօրէն թափանցած է մարդոց կեանքէն ներս, խօլ թափով կ'արշաւէ մարդը փոխարինելու իմաստով, այնքան մը, որ մարդկային ընկերութիւնը հետզհետէ աւելի՛ սուր կերպով կը զգայ անոր հետեւանքներուն ցաւը, որքան կ'օգտուի անվիճելի բարիքներէն: Ոչ-ամբողջական պատկեր մը տուինք այս շարքին առաջին բաժինով:

Չենք ուզեր համեմատութիւն ընել Աստուծոյ եւ մարդուն միջեւ, սակայն եկէ՛ք, պահ մը մտածենք, թէ մինչեւ իսկ Աստուած օր մը դժգոհ մնաց իր ձեռակերտ՝ մարդէն, մինչդէռ Ադամին ստեղծման օրը որքա՛ն գոհունակ էր եւ իր արարչագործութիւնը լինելութեան հասած կը նկատէր (դժգոհութեան միակ աղբիւրը... Եւան չէր). մարդն ալ իր հնարած որեւէ նորութեան համար նախ ուրախ եւ գոհունակ կը զգայ, յետոյ... կը սկսի կրել անախորժ հետեւանքներ: Եւ իսկապէս, իր հնարած մեքենական սարքերուն հետ մարդուն հակամարտութիւնը այնքան հին է, որքան քաղաքակրթութիւնը: Հրաշալի հնարքները, դիւրացնող գործիք ըլլալու կողքին, շուտով վերածուած են նաեւ անպատեհութեան գործոններու:

Մարդկային ընկերութեան հատուածներուն միջեւ պայքարները չեն սկսած «մեքենայի դար»երուն, այլ անոնք շատ աւելի հին են. պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, որ հեռաւոր անցեալին, կային աստուածային մենաշնորհներով օժտուած մենատերերն ու գահակալները, անոնց շուրջ կազմաւորուած որոշ խմբաւորում մը, որ ընդհանրապէս ճանչցուած էր «իշխանաւոր» անունով. անոնց դիմաց կային ստրուկ, հպատակ եւ այլ բնութագրումներով ծանօթ գանգուածները: Իշխանական փոքրաթիւ դասուն եւ հպատակ մեծամասնութեան միջեւ մրցակցութիւնը, հակամարտութիւնները ունին իրենց պատմութիւնը, որ նորագոյն դարաշրջաններուն, քիւրեղացուցած են «դասակարգային պայքար» հասկացութիւնը, իր նրբերանգներով: Օրինակ, հին պատմութեան մէջ, անկիւնադարձային եւ յիշատակելի Ռոմի կայսրութեան դէմ ստրուկներու ըմբոստութիւնը, որուն մէկ խորհրդանիշը կը հանդիսանայ Սպարտակոսի Ապստամբութիւնը: Դարերու թաւալքին հետ, նման հակադրութիւններ ու հակամարտութիւններ յիշատակուած են առանձնայատուկ դրուագներով, հասնելով մինչեւ Անգլիոյ մէջ Չարլզ թագաւորին գլխատման, ֆրանսական եւ յաջորդող յեղափոխութիւններուն: Այդ բոլորը, սակայն, իբրեւ հիմնական դրոշմապատճառ ունեն, մէկ

կողմէ իշխանական՝ իրենց գիրենք մենաշնորհեալ տիրակալներ հռչակող փոքրամասնութեան, իրաւազրկողին, եւ միւս կողմէ՝ անոնց ենթարկուած-հպատակ դարձած իրաւազուրկ գանգուածներուն հակադրութիւնը: Եւ ահա, նորագոյն դարերուն մարդակերտ սարքերը իրենց «ներդրումը» ունեցան հակամարտութեանց մէջ, եղափոխելով «դասակարգային պայքար» հասկացութիւնը:

ՄԱՐԴ-ՄԵՔԵՆԱՅ ՄՐՑՈՒՄԻ ՄԵԿՆԱԿԵՏԸ

Եթէ մեր ուշադրութիւնը սեւեռենք մեզի մօտիկ դարերուն, կը տեսնենք, որ մարդկային ընկերութիւնը փոթորկող եւ տագնապեցնող վիճակները ծնած ու իրենց գարգացումը ապրած են՝ հնարքներու բերած բարիքներուն զուգահեռ: Իրօք, կեանքի-ապրուստի պայմաններ դիւրացնող հնարքները անախորժաց թափ ստացան վերջին 3-4 դարերուն եւ ի վերջոյ ամբողջ մարդկութիւնը, եւ ո՛չ միայն որոշ երկիրներ առաջնորդեցին դէպի ճարտարարուեստի Յեղափոխութիւն:

Օրինակի համար, դարեր շարունակ, մարդը իր արտն ու պարտեզը հերկած-մշակած էր իր ձեռքերով եւ նախնական միջոցներով՝ եզ-արօրով. կիներ իրենց ոչխարներուն բուրդը խուզած էին ձեռքերով, նմանապէս գործածած էին իլիկ, ճախարակ ու նման նախնական սարքեր, ապահովելու համար հագուստ-կապուստ: Նոյնը՝ անմիջական կարիքներու ապահովման տարբեր գետիներուն վրայ: Արհեստներու մէջ իսկ, օգտագործուած գործիքները ապրած են շատ դանդաղ արդիականացում: Ծամբորդութեան միջոցները դարեր շարունակ մնացած են ուղտն ու անասունները, կառքն ու տարբերակները: Այսպէս կարելի է շարունակել մինչեւ Չարթօնը՝ «Լուսաւորութեան դարաշրջան» թեւակոխող մարդոց կեանքի փուլերը: Եւ օր մըն ալ, կարիքը ծնունդ տուաւ նոր հնարքներու, երբ մանաւանդ... կայսրութիւնները ստացած նոր տարածք եւ յղացք, աշխարհը ընդարձակուեցաւ նոր ցամաքամասերով: Մարդը հարկադրուեցաւ մտածել գինք աւելի արագօրէն տեղ հասցնող միջոցներու մասին, երկրագործական եւ ճարտարարուեստական արտադրանքները աւելի առատացնելու միջոցներ հնարեց: Ծոգեշարժ կառաշարներն ու շոգեկալները, երկրագործութեան ու հիւսուածեղէնի մարգերուն մէջ նորահնար մեքենաները ճամբայ ելան մէկ կողմէ՝ արտադրանքը առատացնելու եւ միւս կողմէ՝ մարդուն աշխա-

տանքի տանջանքը թեթեւեղելու մտասելեռումով: Աշխատանքի տարբեր կալուածներու մէջ, համապատասխան հնարքներ նմանապէս առաջնորդուեցան նոյնանման մղումներով: Հիմնականին մէջ մեծ յաջողութիւն արձանագրեցին առաջինին՝ արտադրանքի առատացման մէջ, սակայն մարդուն աշխատանքի պայմաններուն բարեշրջումը պետք ուներ երկար սպասելու: Եթէ նախապէս գանգուածները ստիպուած էին իշխանաւորին, աւատատերին եւ նմաններու հողերուն վրայ երկար աշխատիլ եւ հազիւ ապրուստ ապահովել, եկաւ ժամանակ, երբ արտադրողականութեան ու եկամտի կալուածները երկրագործականէն մեծ մասամբ փոխադրուեցան մեքենաներով բանող գործարան-գործատուն: Նախնական գործիքները բաղդատաբար համեստ էին եւ կը կարօտէին մեծաթիւ մարդկային ձեռքերու հսկողութեան-մասնակցութեան: Յետոյ, հետզհետէ արդիականացող սարքերը աստիճանաբար նուազեցուցին մարդկային գործունի կարիքը: Այդ դարաշրջանին, աշխատանքի ժամերու սահմանափակումի կամ տարիքի մտածում չկար: Աշխատանքը ստիպուած էր օրական 10, 12



կամ շատ աւելի երկար ժամեր աշխատիլ, անչափահաս մանուկներ ու պատանիներ նմանապէս ստիպուած էին իրենց ծնողներուն վիճակին մատնուիլ, որպէսզի կարենային, իբրեւ ընտանիք՝ տարրական կարիքներ ապահովել, ապրիլ. ո՞վ ժամանակ ուներ կամ կը համարձակէր բարօրութեան մասին մտածելու, ալ ո՛ր մնաց՝ ուսումի...:

Արտադրողական միջոցներու զարգացումն ու արդիականացումը, սահմանափակէն դէպի աւելի՛ գանգուածային արտադրողականութիւնը ուղղակի եւ անուղղակի «քաջալերանք» ու մղում ստացան այն փուլերուն, երբ մարդկութիւնը՝ հակամարտ պետութիւններ ու կայսրութիւններ ինկան մեծ ու փոքր պատերազմներու ոլորապտոյտին մէջ: Յետոյ վրայ հասաւ «քարիւղի դարաշրջանը»... Պատերազմները, եւ ո՛չ միայն աշխարհամարտերը, յաւելեալ առիթ տրուեցաւ ճարտարարուեստի արագ զարգացման եւ... շահագործման, իսկ գէնքի ճարտարարուեստը անխուսափելիօրէն իր կողքին ունի արտադրողական եւ մեքենայացումի այլ կալուածներ, որոնք նմանապէս կը մղուին արդիականացման (օդանաւ եւ մասամբ նորին): Եթէ ուզենք մտնել այս կամ այլ կալուածին իւրայատուկ զարգացումներու մանրամասնութեանց եւ դրական ու բացասական հետեւանքներուն մէջ, մեր ուրուագծային

ներկայացումը մեծ ծաւալ կը ստանայ, սակայն ի վերջոյ կը հասնինք նոյն վախճանական կետին, ըսելու՝ որ նոր հնարքները՝ մեքենաներ, փոխադրամիջոցներ եւ այլն, որքան որ աշխատանքն ու կեանքը արագացուցին եւ որոշ դիւրութիւններ ընծայեցին, նոյնքան ալ պատուհաս դարձած ու դժուարութիւններ ստեղծած են մարդուն առօրեային մէջ:

ԱՇԽԱՏԱՌՈՒՆ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՌՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Կեանքի-աշխատանքի մարգերուն մէջ մեքենաներու բազմացման ու տիրապետութեան հետեւանքներէն մէկն ալ եղաւ այն, որ նախկին աւատապետ ու իշխանաւոր դասուն զուգահեռ, ծնունդ առաւ գործատեր-գործարանատերերու նոր դաս մը, որ ո՛չ մէկ ճիգ խնայեց ճարտարարուեստի ու արտադրութեան միջոցները իր ձեռքերուն մէջ կեդրոնացնելու, ներառեալ՝ մեծ մասը նիւթական այն բարիքներուն, որոնք կը ծնէին արտադրութեան ուռճացումէն: Այս դասը, որ որոշ ատեն ետք պատմութեան մէջ իր անունը արձանագրեց դրամատեր անունով եւ իր կարգին դարձաւ փոքրամասնութիւն մը, եթէ սկզբնապէս անուղղակիօրէն դարձաւ աւատապետ-իշխանաւորին մրցակիցը, սակայն նաեւ հասկցաւ, որ պետք է անոր հետ գտնել «իրարու կրնակ քերելու» ձեւ մը, մինչեւ...: Միւս կողմէ, աշխատող գանգուածը երկար ատեն դատապարտուած մնաց այն վիճակին, որուն մէջ էր հողի ու պարտեզի մշակման դարերուն, այսինքն՝ զրկուած մնաց սեփականութենէ եւ իր աշխատանքին արքասիքէն արդարօրէն օգտուելու առիթներէն, հոգ չէ թէ որոշ մտաւորականներ կը գրէին եւթնփիաներու եւ Ելտորատներու մասին: Անոնց դիմաց կային Մաքիաւելիներ ու անոնց Իշխանները...

Մենաշնորհեալներու համար ընդհանրապէս բարիք ու առաւելութիւն ապահովող նորարարութիւնները որոշ կալուածներու մէջ ունեցան տարբեր ազդեցութիւն. այդ կալուածներէն մէկն էր տպագրութեան գիւտն ու գիրի-մտածումներու աւելի արագ տարածման միջոցներու ստեղծումը (այսօր, հաղորդակցութիւններու մեր դարուն, նման հաստատում վստահաբար ժպիտ պիտի բերէ մարդոց դէմքերուն, անկախ ընդհանրապէս միտքի, գիրի ու մամուլի հանդէպ... արհամարհանքէն): Մամուլն ու տարբեր հրատարակչաձեւերու զարգացումը առիթ տուաւ, որ մարդկութիւնը տագնապեցնող իրականութիւններ ո՛չ միայն ընդհանրական ընկարկումներու օրակարգին վրայ բերուին, այլ դուռը աստիճանաբար խմբաւորումներուն միջեւ հաւասարակշռութիւն եւ արդարութիւն հետապնդողներու առջեւ. իսկ «տարբեր խմբաւորումներ»ը կազմաւորուեցան սահմանափակ եկամուտով այլ աշխատողներով՝ տարբեր ոլորտներու պաշտօնեաներ, ուսուցիչներ եւ այլն. աստիկա չպատահե-

ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ

Ճորճ Սրկ. Պրիխանեան

Աւանդութիւնը իր կարեւոր դերակատարութիւնը ունի Զրիստոնէական հաւատացեալին կեանքին մէջ: Եկեղեցւոյ աւանդութիւնը քրիստոնէական հաւատքը կ'արտացոլացնէ: Նախքան Աւետարանը գրի առնուիլը, կար միայն սրբագան աւանդութիւնները, որոնք հաւաքական յիշողութեան արտայայտիչն էին: Այս հաւաքական յիշողութեան հիման վրայ, եկեղեցին իր հաւատքի աւանդը բերանացի կերպով կը փոխանցէր, իր խնամքին յանձնուածներուն՝ հաւատացեալներուն:

Աւանդութիւն բառը եկած է աւանդել բառէն, որ կը նշանակէ յանձնել կամ տալ: Զրիստոնէական առաջին ժամանակահատուածէն իսկ, ձեւակերպուեցաւ աւանդութիւնը: Պօղոս Առաքեալ Տիմոթէոսի ուղղած երկու նամակներուն մէջ, ակնարկութիւն կը կատարէ, աւանդութիւնը պահելու մասին: Ըստ Առաքեալին՝ աւանդութիւնը Ս. Յոզիի օգնութեամբ կը պահուի (Բ. Տմ 1. 14): Պէտք է գուշակ ըլլալ՝ կեղծ տեսութիւններ իւրացնելէ, որոնք մարդը ճշմարիտ հաւատքէն կը շեղեն (Ա. Տմ 6. 21), ինչպէս կ'ըսէ Առաքեալը:

Առաջին դարերու աւանդութիւնները գրի չեն առնուած, զանազան պատճառներով. առաջին՝ Զրիստոնէութիւնը իր առաջին շրջանին ենթարկուեցաւ զանազան տեսակի հալածանքներու: Երկրորդ՝ ժողովուրդին մեծ մասը ուսեալ չէր, անոնք լսելով հաւատքը կ'ընդունէին: Ուստի, Զրիստոնէական նորահաստատ համայնքները բերանացի ձեւով աւանդները փոխանցեցին գալիք սերունդներուն: Նոյնիսկ առաջին շրջանին, Զրիստոսի Աւետարանը բերանացի քարոզուեցաւ, մինչեւ գրի առնուիլը: Աւանդաբար փոխանցուեցաւ նաեւ Տիրամօր միջոցաւ կատարուած հրաշքները եւ իր վերափոխման դէպքը:

Յաւերթ կոյսին ծնունդը, անարատ յղութիւնը, երկրէն երկինք փոխադրուիլը, այլ խօսքով Աստուածամօր կեանքի բոլոր հանգրուանները՝ Աստուծոյ Տնօրինական խորհուրդով լեցուն են:

Սուրբ Կոյս Մարիամի խորհրդրդապահ կեանքը եւ վերափոխումը մեզի առիթ կու տան անելի խորաթափանց խորհրդածելու իր մասին: Ան, ո՛չ միայն կը բնորոշուի «անարատ յղութիւն», այլ նաեւ՝ Յօր Աստուծոյ դուստրը, Սուրբ Յոզիին հարսը եւ Բանին Մայրը:

Մարիամ, որ Յուդայի եւ Դաւիթի տունէն սերած է, Յիսուս Զրիստոսի համբարձումէն ետք, մօտաւոր 15 տարիներ ապրեցաւ Յովհաննէս՝ սիրող Առաքեալին հետ, ինչպէս պատուիրած էր Որդին: Երբ Տիրամօր ննջման ժամանակը մօտեցաւ, Տերը, ինք խոստացաւ ամենասուրբ Կոյսին մարմինը յարուցանել, ինչպէս կը վկայէ Եկեղեցւոյ աւանդութիւնը:

Մարիամ Առաքեալներուն հետ յարատեւ աղօթքով եւ գոհաբանական աղերսներով անցուցին, մինչեւ Ս. Կոյսին ննջման ժամանակը եւ փոխադրուիլը երկինք: Թագաւորներու թագաւորը, երկնային զօրքերու ճամբով հրաւիրեց Ամենասուրբ Կոյս Մարիամը երկնային օթեաններ, որպէսզի անբաժան մէկ մասնակցը դառնայ երկնային թագաւորութեան: Վերափոխումէն ետք,



Առաքեալները սկսան ամբողջ ժողովուրդին պատմել, այն ինչ որ պատահեցաւ Տիրամօր: Հետեւաբար, Աստուածամօր Վերափոխման տօնը Առաքեալներէն հաստատուեցաւ եւ աւանդուեցաւ առաջին եկեղեցիին:

Արժանաւորապէս Սուրբ Կոյսը պատկուեցաւ Աստուածային բրաբիոն գոհակով, երբ փողար հրեշտակապետը ժամկոչեց, փողփողած խուժան երկնային մարմինները շարամանուեցան երկինքէն երկիր, երկնային սանդուխով Աստուածավայել թափօր կազմեցին: Անոնք, պատկառանքով եւ ակնածանքով մօտեցան Աղախիկի դամբարանը եւ գայն փոխադրեցին մեծահոգի արուսեակի մը նման: Ուր, Սուրբ Մարիամ, որ ծնաւ անմահը, այսօր դարձաւ անմահութեան Մայր, յաւիտենականութեան Մայր:

Մարիամ, որ իր դալար ձեռքին մէջ, պատսպարեց Ֆիզիքապետ տկար Յիսուս մանուկը, այսօր Սուրբ Կոյսը ինք, իր Որդիին ձեռքերուն մէջ ամբողջովին ինքզինք յանձնեց: Մարիամ, որ իր որովայնին մէջ բնակեցուց Սրբութիւն Սըրբոցը ժամանակաւորապէս, այսօր ինք կը բնակի երկնային ապարանքին մէջ յաւերժապէս: Ինչպէս Զրիստոսի գերեզմանը բացին եւ ունայն գտան, նոյնպէս Մարիամի գերեզմանը դատարկ գտան:

Վերափոխման տօնը մուտք գործած է Հայաստան աշխարհ Սուրբ Բարդղիմէոս Առաքեալի ճամբով, եւ հաստատուած է Սուրբ Լուսաւորիչ Հայրապետի կողմէ:

Չաքարիա կաթողիկոս, իր կարգին՝ Տօնը կարգեց Օգոստոս 15-ին: Հայ Եկեղեցին, իր Առաքելական դիմագիծը պահելով, Վերափոխման տօնը կը նշէ Օգոստոս 12-էն 18-ի միջեւ գուգադիպող Կիրակին, մեծավայելուչ հանդիսաւորութեամբ նշելու համար այս տաղաւար տօնը:

Ամէն տարի անխափան, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, իր պատգամը կ'ուղղէ ողջ հայութեան, Կաթողիկոսարանի պատկանող Սուրբ Աստուածածնայ վանքէն (Պիքֆայա), յիշեցնելով թէ Վերափոխման տօնը սովորական տօն մը չէ, եւ չի կրնար ըլլալ, եւ այս Վերափոխումը սոսկ փոխադրութիւն մը չէ, այլ ունի իր կարեւորութիւնը մեր կեանքին մէջ՝ իբր Զրիստոնէաներ եւ յատկապէս՝ Հայեր:

Տիրամայրը, իր օրհներգութեան ընդմէջէն, ցոյց կու տայ հեզութեան կարեւորութիւնը. ուստի կ'ըսէ. «Ան տեսաւ իր աղախիկին հեզութիւնը» (Դկ 1. 48): Այս պատճառով է, որ Մարիամի հոգին կը ցընծայ Աստուծոյ ընտրեալը ըլլալով: Աղախիքը, այսօր Թագուհի ըլլալով, բոլոր ազգերը երանի կու տան իրեն եւ պիտի տան յաւիտենան, ինչպէս կ'ըսէ Մարիամ:

Սուրբ Մարիամ ուխտեալ մը ըլլալով հանդերձ, ինքզինք ուզեց ամբողջովին նուիրել եւ յանձնել Աստուծոյ: Իբր խնկի ծառ, սերմանուած ու ցանուած Աստուծոյ անդաստանին մէջ, ծաղկած եւ մշտադալար ծաղիկներով: Անդադար անուշահոտ խունկի նման, իր աղօթքները կը մատուցանէ Աստուծոյ բուրաստանին մէջ: Սուրբ Կոյս Մարիամ այսօր օրինակն է մեր տիպար Զրիստոնէաներ ըլլալուն: Ինք, ոչ միայն երկրի վրայ տիպար մըն է, այլ վերին Երուսաղէմի տիպար քաղաքացին, եւ պարտաւոր ենք իր օրինակին հետեւելու: Իրմէ կը սորվինք՝ աղօթելը սովորութեան վերածել եւ մեր անձերը նուիրել Հօր Աստուծոյ:

Մարիամ ինք համարձակօրէն յայտարարեց հրեշտակին. թող Աստուծոյ կամքը ըլլայ, եւ ըսաւ՝ «Ես անոր աղախիկն եմ»: Իսկ մենք այսօր, դժբախտաբար համարձակութիւնը ունինք Աստուծոյ ծրագրին դէմ ընդվզելու եւ անմտօրէն կը փորձենք Աստուծոյ գծած ճանապարհէն հեռանալու, ուրիշ ճամբայ մը որոնելու յանդգնութեամբ: Մարդիկ շատ անգամ կը մերժեն ընդունիլ թէ Աստուծոյ ծառան են, այլ կ'ուզեն, որ իրենք իրենք կեանքի թագաւորները ըլլան: Այդպիսիներ, ի գուր կը գծեն իրենք կեանքի ուղին, առանց կարեւորութիւն տալու Աստուծոյ փրկութեան ծրագրին: Ինչպէ՞ս կարելի է մեր կեանքին նաւերը ուղղել առանց «Նաւապետ Բարի»ին, որովհետեւ միայն ինքն է որ կրնայ մեզի «խաղաղ նաւահանգիստ» հասցնել: Ուրեմն, թոյլ տանք մենք մեզի իմանալու մեր տկար բնութիւնը, համոզուելով, մեր ձայնը Մարիամի ձայնին հետ միացնելով մենք այլ ըսենք՝ թող ըլլայ քու կամքը, այն յոյսով որ մենք այլ, օր մը, Սուրբ Մարիամի բարեխօսութեամբ, մեր հոգիները արժանանան յաւիտենական կեանքին: Նաեւ, թոյլ տանք, որ Աստուծոյ ծրագիրը կատարուի, նոյնիսկ եթէ մեզի համար անլուծելի կը թուի:

Ապրիլը յոյսով, որովհետեւ ան բնաւ ամօթով չի ձգեր, ինչպէս կ'ըսէ Պօղոս Առաքեալ: Այդ յոյսով է որ՝ կարելի է երկնային լոյս խորանը մտնել:

Սրբութեան Մայրը, հեզութեան առաքինութիւնը մարմնաւորելով, բոլորիս կենդանի օրինակ դարձաւ: Մեր պարտականութիւնն ու պարտաւորութիւնն է սորվիլ ու սորվեցնել հեզութեան տեղն ու դերը մեր կեանքէն ներս: Հեզութիւնը, որ Աստուծոյ կը մօտեցնէ եւ հոգիները կ'ազնուացնէ: Հեզութիւնը, որ Սուրբ Հոգիին պարգեւած շնորհքներն է: Որուն միջոցաւ Սուրբ Կոյսը կրցաւ ինքզինք նուիրագործել եւ հեռանալ բոլոր երկրային ցանկութիւններէն, այսպիսով շարականագիրին կողմէ կոչուեցաւ «Ամա թեթեւ»:

Մարիամ իր երկրաւոր կեանքին մէջ իր մէջքին գօտի կապեց, որ կը խորհրդանշէ ժուժկալ ըլլալ, այսինքն՝ աշխարհի ցանկութիւններէն հրաժարիլ՝ Այսօր Աստուածամայրը Վերափոխումով, երկնականամարին գօտիին վրայ, իր ամա հովանին տարածեց: Մենք այլ, մեծարանքով մօտենանք իրեն, խնդրելով, որ մեզի պատսպարէ իր հովանիին ներքեւ:

Աստուածամայրը կոչուած է՝ «Մորենի Անկիզելի», այն մորենին որ պարկապեց Սուրբ հոգիին կրակը՝ առանց սպառելու, եւ գայն դարձուց «Անապական Տաճար»՝ Սուրբ Հոգիին կրակով մաքրուած: Եկեղեցւոյ հեզութեամբ մօտենանք եւ պատրաստ ըլլանք հոգեպէս ընդունելու Սուրբ Հոգին, որուն միջոցաւ պիտի առաջնորդուինք, ինչպէս Մարիամ առաջնորդուեցաւ դէպի երկինք եւ կոչուեցաւ՝ «անդատապարտ շառաւիղ»: Ահա այս ճանապարհը գծեց Մարիամ իր կեանքով, որուն միջոցաւ մենք այլ կրնանք արդարանալ:

«Մեղքի փուշերէ մաքուր անդաստան» անուանուեցաւ, որպէսզի մեր աղօթքներով ակումներ բանանք, ցանենք ու սերմանենք մեր ըղձանքները՝ փափաքները եւ ջրենք մեր մեղքերու արտասուքով: Տիրամօր այս անդաստանը, պարարտ հողի նման, բացարձակապէս չի զլանար եւ չի մերժեր իրեն պատկառողներուն: Յիսուս, ինչպէս իր մօրը խնդրանքը կատարեց Կանայի Հարսանիքի ժամանակ, նոյնպէս Սուրբ Կոյս Մարիամ պիտի մատուցէ մեր խնդրանքները իր Որդիին:

Մեր հաւատքի խարիսխները ամրակուռ ձեւով հաստատենք Աստուածամօր բարեխօսութեան վրայ, որովհետեւ իրաշագործ այն Մայրն է, որ մեր փափաքները կ'իրակաւացնէ, մեր հիւանդութիւնները կը բժշկէ, մեր վերքերուն բալասանք կը դառնայ, «գբոլորից փրկութեան Մայր» կոչուելուն համար: Ան, ո՛չ միայն Տիրոջ Մայրն է, այլ գրկեալին, բանտարկեալին, աղքատին եւ կարիքաւորին:

Եկե՛ք, այս Սուրբ տօնին առիթով մտնենք «երկնային լոյսի խորանը» եւ մեր սրտաբուխ աղօթքներով խնդրելով Տիրամօր բարեխօսութիւնը: Այս տօնը լաւագոյն առիթն է, որ Մեր ուխտերը նորոգենք ուխտապահ Տիրամօր հետ, որ Նոր Ուխտի միջնորդին մայրն է: Աղաչենք իրմէ նաեւ, որ մեր ննջեցեալ- Շար.՝ Էջ 12 ➤

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԸ ԱՄՐՏԵՑԱՆ. «ԱՐԴԱՐ ԽԱՂԻ» ՄՐՑԱՆԱԿԸ ՍՏԱՅՄԻ ՀԱԼԵՊԻ ԿՈՂՈՎԱԳՆԴԱԿԻ (ՊԱՍՔԵԹԻ) ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ

«Արմենփրես».-Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ մեծ հանդիսութեամբ իր աւարտին հասան Համահայկական 7-րդ ամառնային խաղերը:

Փակման արարողութեան սկզբը ներկաներուն իր խօսքը ուղղեց Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Չաքարեան՝ շնորհակալութիւն յայտնելով խաղերուն իրենց ջանակութիւնը բերած բոլոր պետական եւ ոչ-պետական կա-

խաղերու յայտնութիւն դարձաւ Տուպայի պատուիրակութիւնը: «Կարգապահութեան եւ մարզական ոգիի» մրցանակը ստացաւ Վիեննայի խումբը: Համահայկական խաղերու պատմութեան մէջ առաջին անգամ լաւագոյն քաղաքներ ճանչցուեցան Էջմիածինի եւ Սիտնիի պատուիրակութիւնները: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան պարգևատրեց բոլոր մրցանակակիրները:

«Համահայկական խաղերու 14



ոյցներուն, մասնակիցներուն եւ մրցավարներուն, ինչպէս նաեւ լրագրողներուն:

«Խաղերը հաստատուն կամուրջ դարձած են Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի միջեւ», շեշտեց Չաքարեան: Ապա ան ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ալինեանը պարգևատրեց Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի պատուոյ շքանշանով: Ներկաներուն հրաժեշտի խօսքով դիմեց նաեւ Համահայկական խաղերու հիմնադիր անդամներէն Ալպերթ Պոյաճեան՝ շեշտելով, որ մարզանքով կը միաբանուին Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը: Պոյաճեան կոմիտէին անունով Իշխան Չաքարեանին պատուոյ շքանշան շնորհեց:

«Միսս համահայկական խաղեր» անունը ստացաւ Ռուսաստանի ձեռնագնդակի խաղող Աննա Թունեան: Լաւագոյն մարզական պատուիրակութիւնը Ռուսաստանի ընդհանուր խումբն էր, «Արդար խաղի» մրցանակը ստացաւ կողովագնդակի (պասքեթի) Հայկաի աղջկանց խումբը: Համահայկական

օրերուն ընթացքին մենք վայելեցինք միասին ըլլալու բերկրանքը: Ապացուցեցինք, որ մէկ ու միասնական ենք: Փակման արարողութիւնը կը խորհրդանշէ այն, որ աշխարհի բոլոր հայերուն համար կայ մէկ մայրաքաղաք՝ Երեւանը: Անկախ քաղաքական եւ կուսակցական պատկանելիութեան, մենք միշտ միասնական պիտի ըլլանք: 8-րդը անելի մեծ պիտի ըլլայ», ըսաւ Փաշինեան: Վարչապետը շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն եւ կազմակերպիչներուն ու խաղերը փակուած յայտարարեց:

7-րդ Համահայկական ամառնային խաղերուն այս տարի կը մասնակցէր 5244 մարզիկ՝ աշխարհի 35 երկիրներու 161 քաղաքէ: Խաղերուն քանի մը մարզածէներ կատարուեցան Ստեփանակերտի, Մարտակերտի եւ Ասկերանի մէջ, իսկ հիմնական պայքարը Երեւանի մէջ ծաւալեցաւ: Այս տարի կը մասնակցէր 3 նոր երկիր՝ Արաբական Միացեալ Եմիրութիւնները, Իրաքը եւ Չեխիան:

Նորգիւղեան յուշեր - 7

ՓՈՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸ

Յակոբ Միքայէլեան

Իսկապէ՛ս, որ Նորգիւղը մեզի համար փոքր Հայաստան մըն էր: Մեր թաղերուն մէջ ապրող երկու արաբ ընտանիքներուն երեխաները մեզի պէս հայերէն կը խօսէին, եւ մենք ուշ իմացանք, որ անոնք հայ էին: Այն աստիճան մեր սեփականութիւնը կը նկատէինք այս թաղամասը, որ մանկական չարութեամբ, երբեմն մեր թաղէն անցնող այլազգի դպրոցականներուն արգելք կը հանդիսանայինք եւ իրենցմէ «ագատ անցումի տուրք» կը պահանջէինք, ստիպելով որ իրենց գրպակին մէջի եղածներէն մեզի բաժին հանեն: Թութի շրջանին, էշը առջեւ ձգած, թաղէ-թաղ դեգերող իշապանը բարձրաձայն «Եալլա թութ, եալլա թութ, աղուոր չէ՛, աղուոր չէ՛» կը կանչէր. Թաղի երեխաները անոր խնդրանքին որպէս պատասխան, չարածիւրութեամբ այդպէս թարգմանած էին եւ մարդը տարիներով նոյն կանչով կը պտտէր, առանց ականջ կախելու սրբագրողներուն, եւ հաւատացէք այդ ձեռով աւելի գնորդ կ'ունենար:

Ինչպէ՛ս Հայաստան չէր Նորգիւղը, երբ հայկական էր ամեն ինչ՝ շատ քիչ բացառութեամբ իր արաբ բնակիչներով, հայապատկան խառնութեամբ եւ գործատեղիներով, փոռերով եւ սրճարաններով: Երբ Նորգիւղի մէջ էին Քե ճեմարանը, Չաւարեան, Սահակեան, Մեսրոպեան, Վարդանանց եւ Նորգիւղի Կիլիկեան վարժարանները, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Գեորգ, Ս. Երրորդութիւն - (Չուարթնոց) եւ Յիսուսեաններու եկեղեցիները, Կիւլպէնկեան մայրանոցը, Վասպուրական ակումբը, Չէթունցիներու ակումբը, Նաւասարդ մարզադաշտը, ՍՕԽ-ի դարմանատունը, Վարանդեան գրադարանը, քիչ անդին՝ Ովասիս լողաւազանը, «Պոսթան Փաշայի» Հայ Ծերանոցը...

Կրնա՞ք պատկերացնել թուրքի եաթաղանէն հազիւ ճողոպրած հայու խլեակներ, որոնք Մեծ Եղեռնէն հազիւ քանի մը տասնամեակ ետք, իրենց սեփական ուժերով յաջողեցան ստեղծել այս բոլորը:

Եւ մենք կը մեծնայինք այդ գիտակցութեամբ: Անշուշտ իրար յաջորդող Սուրհոյ իշխանութիւնները բարի աչքով կը նայէին մեզի եւ սուրիական անձնագիրներ շնորհելէ ետք, որպէս լիիրաւ քաղաքացիներ, բանակին եւ խորհրդարանին մէջ ալ ունեցանք մեր ներկայացուցիչները, որոնք ծառայելով սուրիական հայրենիքին, հայու պատիւը բարձր պահեցին եւ արժանացան բոլորին բարձր գնահատանքին:

Քիչ բացառութիւններով աղքատիկ Նորգիւղը այնպիսի մտաւորական, որակաւոր մարդիկ հանեց իր ծոցէն, որոնք աշխարհով մէկ տարածուեցան եւ ազգային, եկեղեցական, կրթական, մարզական, արուեստի ու գրականութեան բնագաւառներուն մէջ փայլեցան:

Մեծ է թիւը անոնց, չեմ ուզեր փորձութեան մէջ իյնալ եւ յիշել անուններ, յանկարծ կարելոր անուն մը մոռնալու յանցանքին մէջ չիյնալու համար: Վստահ եմ, տարեց Նորգիւղցիներ անմիջապէս պիտի մտաբերեն իրենց ծանօթ անունները:

Յարգանք այդ հոյի մահացածներուն յիշատակին եւ ցարդ ապրողներուն:

Անուններ ըսի եւ յիշեցի որ Նորգիւղի մէջ շատեր իրենց իսկական անուններուն կողքին «շահած» էին նաեւ կեղծանուններ ալ, որոնցմով կը ճանչցուէին, աւելի քան իրենց իսկական անուն-մականուններով, ինչպէս՝ բոլորին ծանօթ «Լանդըր Եախուպը», թաղապետ «Փարթըխ Միսաքը», նշանաւոր վաճառատան «Թիք-Թաք Հայկազը», նման ուրիշ վաճառատան մը հիմնադիրներ՝ «Շաշուները», մրգավաճառ, «Չօլախ Անդրանիկը», մասվաճառ «Ղասսայ Յակոբը», հնահաւաք եւ դերասան, թատրոնի երկրպագու «Պախիսալ Խորէնը», որուն խանութը փոքր ակումբ մըն էր ազգային եւ թատերական հարցերու քննարկման վայր. ապա՝ «Փաշաճի Տիգրանը», «Թախթաճի Պետրոսը», պաղպաղակավաճառ «Հայաստանցի»... ո՞ր մէկը յիշեմ:

Պաղպաղակավաճառ ըսի, անպայման յիշելու եմ ոչ հայ նշանաւոր պաղպաղակ եւ անուշեղենի տեսակներ պատրաստող «Կիւզալ Ահմատը»... որուն այդ անունով կը քած էին հայ կանայք, որովհետեւ այդ գիրուկ, հսկայամարմին մարդը կարմրաթուշ էր եւ գեղադէմ:

Նորգիւղի պատմութիւնները հատորներ կրնան լեցնել: Հանգ. Յակոբ Աղաբաշեան բաւական պատմուածքներ ունի Նորգիւղի մասին, որոնք իրատարակուած են Ծառուկեանի «Նայիրի»ին մէջ, ապա ամփոփուած երկու գիրքերու մէջ: Ես ալ, իմ կարգիս շարք մը պատմուածքներով փորձած եմ վերակենդանացնել Նորգիւղը, որ անսպառ շտեմարան է յիշատակներու:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ՄՈՒՐԱՏ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 25 Օգոստոս 2019-ին, յաւարտ Ս. եւ Աննաի Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլաներ - Հալէպ:

ԴԻՏԱԼԿԻՆ

ԽՈՐՆ ՈՒ ՅՈՐԴՈՐԸ ԹԱՐԳԱՎԱՆԵՆՔ ՎԱՐԱԿԻՉ ԿԵՆՍԱԿԵՐՊԻ



Խաչիկ Ծափինեան

Խօսքի եւ գործի, ինչպէս նաեւ մտաւոր տեսութեանց եւ կիրառումներու միջեւ անջրպետը տեւաբար ու ամենուրեք եղած է լայնածիր եւ անկամարտի:

Առօրեայ մեր կեանքին մէջ յաճախակիօրէն կը հանդիպինք մարդոց, որոնք իրենց տեսակետներն ու գաղափարները կը ներկայացնեն մեծ ճարտարութեամբ եւ պերճաբանութեամբ, ամենայն տրամաբանութեամբ ու համոզականութեամբ կը ճառեն ազնուագոյն սկզբունքներու եւ սրբազնագոյն հաւատալիքներու մասին, մինչեւ անգամ սեփական կուռ միտքերով ու վսեմ ճշգտումներով կը հրապուրեն խօսակիցներ կամ ունկնդիրներ, իսկ գործնականապէս կը ցուցաբերեն բոլորովին տարբեր ընթացք եւ մօտեցում մնալով շատ հեռու իրենց դրսեւորած մտածումներէն ու դիրքորոշումներէն:

Ընթացիկ մեր կեանքէն բազմաթիւ դրուագներ եւ երեւոյթներ կու գան վկայելու, որ շատ դժուար է ու գրեթէ անկարելի հաշտեցնել մարդոց խօսքերն ու գործերը, կամ սահմանափակել տեսութիւնն ու իրականութիւնը բաժնող անդհախոր վիճի:

Աշխարհի չորս ծագերուն այլազան առիթներով կը կազմակերպուին համագումարներ, գիտաժողովներ եւ գերաստիճաններ, որոնց մասնակցութիւն կը բերեն բազմաթիւ կազմակերպութիւններ ու երկիրներ իրենց լաւագոյն գիտնականներով, լիազօր ներկայացուցիչներով եւ բարձրագոյն պատասխանատուներով: Այդ հանդիպումներու ընթացքին մարդկութիւնը կամ հասարակական զանգուածներ մտահոգող եւ տագնապեցնող հրատապ խնդիրներու առնչութեամբ կը կատարուին լուրջ ուսումնասիրութիւններ, առողջ վերլուծութիւններ, օգտակար առաջարկներ, նպատակաւոր դարմանումներ... Իսկ իբրեւ արդիւնք՝ կ'ընդունուին վճռական ու բարենպաստ որոշումներ, ապագայի հաշտոյն կը մշակուին հրաշալի ծրագիրներ, կը հրապարակուին անտարբեր հեռանկարներ խոստացող մեծաշնորհ հաղորդագրութիւններ կամ յայտարարութիւններ...: Սակայն, իրողապէս այդ որոշումներուն ու եզրայնագումներուն գործնականացումը միշտ ալ կ'ուշանայ, եւ ժամանակի թաւալումին հետ, իրենց հմայքն ու ազդեցութիւնը տակաւ կորսնցնելով անոնք կը պարպուին պարունակէ եւ օր մըն ալ ընդմիջտ արժեզրկուելով կը յանձնուին մոռացութեան:

Արդարեւ, արագ ակնարկով մը եթէ թերթատենք պատմութիւնը, առանց դժուարութեան պիտի հաստատենք թէ տարբեր ժամանակներու ընթացքին միջոցը անկամարտի տարողութեամբ ընդարձակ եղած է խօսքի եւ իրականութեան, միաժա-

մանակ ծրագրումի ու գործարդութեան միջեւ, ըլլայ անհատական եւ ըլլայ հաւաքական հարթակներու վրայ:

Մեր օրերուն արհամարհելի չէ թիւը այն մարդոց, որոնք աշխատանքէ հեռու, իրենց ժամանցի կամ գրոյցի պահերուն սովորութիւն դարձուցած են հաճոյալի եւ շրայլուած արտայայտութիւններով ջատագով հանդիսանալ ուղղամտութեան, պարկեշտութեան, անսայթաք նկարագրի, բարոյական վեհ սկզբունքներու եւ այլ անհամար առաքինութիւններու... Այնուամենայնիւ, պահ մը ետք երբ փոխադրուին գործնական միջավայր, ուր կը տիրապետեն նախանձ, անհանդուրժողութիւն, անողով մրցակցութիւն եւ անյազուրդ շահամոլութիւն՝ անոնք կը փոխակերպուին ամբողջովին տարբեր եւ անճանաչելի էակներու, որոնք ոչ մէկ աղերս ունին վերոյիշեալ պատմական եւ ազնուաբարոյ մարդոց հետ:

«Յարմար եւ ատակ մարդը համապատասխան պաշտօնին» նշանաբանը ամէն առիթով առաջ կը քշենք եւ արժանաւորներ միայն գործի հրաւիրելու պահանջք կը դնենք, բայց իրողապէս շատ անգամ ամենապատասխանատու դիրքերու վրայ պատահական տըլեալ պաշտօնին հետ ամենեւին կապակցութիւն չունեցող համեստ ընդունակութիւններով մարդիկ կը բազմեցնենք, ընդհանրապէս թելադրուած փոխառու համաձայնութիւններէ, ինսամիական կամ բարեկամական կապերէ եւ այլ բազում բացայայտ եւ քողարկուած նկատառումներէ:

Շատեր կը յոխորտան իրենց լայնախոհութեամբ, աջալըջութեամբ, պայծառամտութեամբ, ազատական գաղափարներով եւ սկզբունքներով, կը հաւաստիացնեն օրինակ որ իրենք կողմակից են այդ մարդու համահաւասար իրաւունքներ ճանչնալու կնոջ, անոր հանրային պաշտօններ եւ ղեկավար դիրքեր վստահելու, ազատ եւ անձնապէս յարմար դատած ոճով կենցաղակերպ վարելու, տարբեր խնդիրներու մասին անկաշկանդօրէն արտայայտուելու, ինչպէս նաեւ որոշակի եւ ուրոյն տեսակետներ պարզելու եւ այլն: Սակայն ընտանեկան յարկէն ներս գերակայութեամբ, հրամայողաբար եւ բրտութեամբ կը վերաբերին իրենց կողակիցներուն հետ, մշտապէս իբրեւ ծառայի հնազանդութիւն կամ ենթակայութիւն պարտադրելով անոնց ու անտեղիտալիօրէն իրենց վերապահելով վրձնորոշ խօսքը:

Բանաւոր արտայայտութիւնները որքան ալ ըլլան գեղեցիկ, շահեկան, տպաւորիչ եւ դարպասող կը մնան արժեզուրկ, եթէ չբարգմանուին գործի կամ չարդիւնաւորուին շօշափելի արարքներով, տակաւ դառնալով պարզապէս ցուցադրական եւ անիմաստ ելոյթներ, կամ սպառողական անհեթեթ պոռոտաբանութիւններ:

Տկար եւ փոքրոգի մահկանացուներ երբեմն բարձրագոյն վկայականներու, դիրքերու կամ պաշտօններու հասնելէ ետք կը մոռնան իրենց թշուառ, խեղճ եւ կարեկցալի անցեալը ու կը խուսափին բացայայտել իրենց իրաւ ինքնութիւնը, մինչեւ իսկ կը փորձեն ծածկել ազգակցական այն սերտ կապը կամ արեւակցութիւնը, որ գոյութիւն



ունի իրենց եւ խոնարհ դասի պատկանող հարագատներու ու սիրելիներու միջեւ... անարդարօրէն եւ անպերախտութեամբ ուրանալով անոնց կողմէ իրենց տրամադրուած անգնահատելի բարիքներն ու հսկայական նպաստը, որոնց շնորհիւ կարողացած են տիրանալ այսօրուան պատիւին եւ յաջողութեան:

Անտարակոյս, նման շեղ վարքագիծ մը մարդս կ'առաջնորդէ անպարկեշտութեան եւ խաբէութեան, նախ իր անձին՝ ապա ուրիշներու նկատմամբ, դարպասը լայն բանալով կեղծիքի եւ խաթարումներու առաջ: Ուրեմն՝ գործնական ապացոյցը կը մնայ ամենավստահելի եւ ամենահաւաստի գրաւականը մեր խօսքերու ճշմարտացիութեան ու վաւերականութեան:

Փոխադրուելով այլ բնագաւառ՝ գրականութեան, արուեստի եւ ստեղծագործութեան աշխարհ, պիտի տեսնենք որ մշակութային եւ գեղարուեստական մեծ ուղղութեանց հիմնադիրներ կամ ջահակիրներ յղացած են չափանիշեր, տեսութիւններ եւ օրէնքներ, գորս կը կիրարկեն շեշտուած խստապահանջութեամբ ու բժախնդրութեամբ այլոց պատկանող ստեղծագործութիւններու քննարկման եւ արժեւորման պարագային: Մինչդէռ երբ կարգը կու գայ իրենց երկերուն եւ արտադրութիւններուն՝ կոպտօրէն եւ առանց վերապահութեան այդ սկզբունքներն ու նախապայմանները, ակնյայտօրէն դաւանելով այն տեսութիւնը, թէ իրենց ընդունած ու բանաձեւած կանոններն ու արժեզանքները ի գօրու են միայն ուրիշներու համար, բայց ոչ՝ իրենց:

Բժիշկներ ընդհանրապէս կը զգուշացնեն իրենց իրանդները ոգեւից ըմպելիներու եւ ծխախոտի

վնասներէն, անոնց կը յանձնարարեն սննդականոսի եւ մարմնամարզի հետեւիլ, նաեւ հեռու կենալ զանազան մոլութիւններէ եւ շատակերութենէ: Բայց իրենք շատ քիչ պարագաներու միայն կը գործադրեն այդ թելադրութիւններն ու յորդորները, որդեգրելով այն սկզբունքը որ կը պատգամէ. «Կատարէ խորհուրդներս, նոյնիսկ եթէ նկատես, որ ես ինքս կը թերանամ անոնց կիրարկման մէջ, որովհետեւ անոնք անպայմանօրէն պիտի օժանդակեն քեզի, մինչ անձիս հանդէպ անփոյթ եւ անհոգածու վերաբերմունքս ոչ մէկ ծեւով պիտի վնասեն ուրիշներու»:

Նմանօրինակ երեւոյթներու եւ պարագաներու թուարկումը տակաւին կարելի է շատ երկար շարունակել՝ կեանքի այլազան ասպարեզներէն անհամար օրինակներ մէքերելով:

Կեանքի մէջ ոչ մէկ միջոցառում կամ գործընթաց անելի ուղղիչ, վարակիչ եւ նպատակասլաց կրնայ ըլլալ, քան սեփական կենցաղով ապացուցուած ազնիւ, տիպար եւ առարկայական մարմնաւորումը, որ կը հանդիսանայ գօտեպնդիչ ու խթանիչ ուժ եռանդուն եւ արդիւնաբար գործունեութեան, ինչպէս նաեւ ապահով գրաւական ազնիւ համոզումներ խարսխելու, վսեմ նպատակներ հետապնդելու եւ հեռահաս տեսլականներ կենսագործելու:

Այսօր, անհրապոյր եւ տաղտըկալի յանկերգի նման ամենուրեք կը լսուին ազատութիւն, անկախութիւն, հասարակութիւն, եղբայրութիւն, արդարութիւն, ժողովրդավարութիւն, մարդկային իրաւունքներ փառաբանող ու պահանջող կոչեր, տակաւին կը բարձրանան խօսքի եւ դաւանանքի անբռնաբարելիութեան, ժողովուրդներու ազատ ինքնորոշման, հասարակաց շահերու գերադասման, թշուառներու եւ իրաւագրկուածներու պաշտպանութեան, ոճրային կամ բիրտ արարքներու մերժման ու դատապարտման յարող եւ գօրակցող հրաւերներ ու կարգախօսներ... Այսուհանդերձ՝ գործնականապէս ոչ մէկ քայլ կ'առնուի այդ ճոռմը, ուռուցիկ եւ պոռոտ լոզունգները կենսի կոչելու ուղղութեամբ:

Այսպէս՝ խօսքն ու գործը սովորաբար կը գտնուին հեռաւոր դիրքերու վրայ, երբեմն նոյնիսկ ներկայանալով իբրեւ հակոտնեայ բեւեռներ, այն սաստիճան, որ սակաւադէպ կերպով գանոնք կարելի է տեսնել կողք-կողքի, իրարու հաշտ ու զուգահեռ ընթացքի մէջ:

Արդարեւ, իրենց դաւանած տեսութիւններն ու խօսքը դժող անհամար մարդիկ կը վիստան մեր շուրջ: Անոնք կը ջանան յարդարել եւ բարեզարդել շատ մը ժխտական ու յոռի երեւոյթներ, ապա գանոնք հրամցնել բարեշրջուած եւ դրական կերպարով՝ խեղաթիւրելով իրականութիւնները, թաքցնելով թերութիւններն ու անպատեհութիւնները: Անոնց այս վերաբերումը խարդախ եւ չարակամ մարդոց վատ արարքներուն հետ կարելի է համեմատել միայն: Քանի՞ անոնք կը փորձեն խաբել մեզ, չարաշահել մեր բար-

ՔՐՄԱՊԵՏ ՄԸ՝ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԵՐԵԱՆԻՆ ՄԷՋ (ՅԻՇԵԼՈՎ ԱՆՄԱՐԱՆՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ ՇԱՅԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆԸ)




Լևոն Շանոյեան

ԻՆՉԵՐ ԸՍԱԾ ԷԻՆ ՕՇԱԿԱՆ ՈՒ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Շահան Պերպերեանի մասին արտայայտուած են շատեր՝ թէ՛ իր ժամանակակիցներէն, թէ՛ իր աշակերտներէն: Պիտի կեդրոնական սակայն երկու անուններու վրայ, - Յակոբ Օշական եւ Անդրանիկ Ծառուկեան:

Օշական տարիքով աւելի մեծ էր, քան Պերպերեանը: Բայց անոնք ժամանակակից մտաւորականներ



էին, ապրած ու շնչած էին Պոլսոյ հայկական եգալի մթնոլորտը, շրջապատուած՝ մեծաթիւ գրողներով ու երեւելի դէմքերով:

Ճակատագիրը այնպէս տնօրինեց, որ Օշական ու Պերպերեան զոհ չէրթան Մեծ Եղեռնի եաթաղանին: Օշական ծայտեալ Պուլկարիա փախաւ, իսկ Պերպերեան, - բացառիկ բախտաւորութիւն, - չձերբակալուեցաւ կամ չաքսորուեցաւ առհասարակ: Չինադադարէն ետք՝ երկուքն ալ մաս կազմեցին Պոլսոյ այն կարճատեւ եռեւեփուն գարթօնքին, որ կը միտեր շտկել մէջքը հայութեան եւ յոյս ներշնչել անոր: Այդօրերուն է, 1922 Յունուարին, որ սկսաւ հրատարակուիլ «Բարձրավանք» հանդէսը, որուն խմբագրութեան մաս կազմեցին Օշական ու Շ. Պերպերեան՝ Թեքեանի, Կոստան Չարեանի ու Գեղամ Գավաֆեանի հետ միատեղ: Այս որակաւոր հանդէսէն լոյս ընծայուեցաւ լոկ հինգ թիւ:

Աւելի քան տասնամեակ մը յետոյ, երկու վաղեմի բարեկամները զիրար գտան Երուսաղէմի մէջ, Սըրբոց Յակոբեանց վանքին շուքին տակ, ուր միասնաբար լծուեցան կրթական արգասաբեր վարուցանի մը, ինչպէս նշեցինք արդէն:

Անոնք որոնք ի ձեռնին ունին Օշականի «**Յայ գրականութիւն**» հաստատութիւնը, որ ամառը, գարնանը կ'ստիկնաւ, որ այնտեղ, «**Անմիջական գրականութիւն. 1922-1940**» գլուխին տակ, յետեղեռնեան երեք տասնեակ գրողներու շարքին, հեղինակը պատուոյ տեղ տուած է նաեւ Շահան Պերպերեանին, արտատպելով «**Մարդը**»

խորագրեալ անոր կարճ մէկ ակնարկը Թորգոմ պատրիարքի մասին:

Դժուարահաճ Օշականի այս «հիւրընկալութիւն» իրապէս գարմանալի է, որովհետեւ Շ. Պերպերեան գեղարուեստական գրականութիւն գրեթէ չէ մշակած, հակառակ արուեստի իր խոր հասկացողութեան եւ հակառակ արուեստագետի իր շէշտուած խառնուածքին: Այնուհանդերձ, Օշական ներառած է Պերպերեանը իր պատկառելի դասագիրքին մէջ, գայն բնորոշելով միայն երկու բառով. - «Եգալի արժէք»:

Այս երկու բառերը, ահաւասիկ, պատճառ դարձած են, որ ոմանք տրտնջան ու քրթմնջեն. «**Ի՞նչ գործ ունի իմաստասեր Պերպերեանը՝ Համաստեղի, Սնձորիի, Բենիամին Նուրիկեանի, Շահնուրի կամ Վահե-Վահեանի նման գրողներու շարքին...: Մեծն Օշական տո՞ւրք տուած է իր բարեկամին**»:

Անդրանիկ Ծառուկեանն է որ կ'անդրադառնայ այս երեւոյթին ու կը պատմէ որ առիթով մը ինք անձամբ հարց տուած է Օշականին, թէ ինչո՞ւ Պերպերեանը տեղ գտած էր իր դասագիրքին մէջ. ի՞նչ գրած էր ան կամ ի՞նչ տուած:

Օշական գլուխը ցնցեր է ու բա-



ւարարուեր հետեւեալ պատասխանով. «**Դուն Շահանը չես ճանչնար**»:

Ու Ծառուկեան կը շարունակէ պատմել:

-**Ճակատագիրը այնպէս ուզեց, որ Շահանը ՃԱՆՉՆԱՆՔ Օշականի ... դագաղին վրայ: Եկած էր Գարեգին Վեհափառը ներկայացնելու «այլուոր գրագետ» ին թաղման: Ու հոյակապ դամբանականով մը վերլուծեց Օշականի գրականութիւնը, մասնաւորաբար անոր քննադատական գործին ձգտումները, իմաստը, ոգին: Զսան վայրկեանի մէջ Շահան Պերպերեան բանաձեւեց հեղեղային գրական վաստակի մը նկարագիրը, պարզեց՝ յստակ եւ անթերի ոճով, երբ ուրիշներ չէին յաջողած ընել այդ բանը քսան տարիներէ ի վեր... (տե՛ս «Նայիրի» շաբաթաթերթ, 28 Յուլ. 1956):**

Ի դէպ, վերի մէջերումը հա-

տուած մըն է միայն այն խիստ շահեկան մահագրականէն, զոր գրի առած ու հրատարակած էր Ծառուկեան իր թերթին մէջ, Պերպերեանի մահուան առիթով: Այստեղ, Ծառուկեան ի՞նչ ալ այլեւս կը թուի համոզուած ըլլալ, թէ Շ. Պերպերեան կրնար ժամանակակից հայ գրականութեան տիրապետող դէմքերէն մէկը դառնալ՝ եթէ... ստեղծագործեր: Բայց իմաստասիրութեան մեր քրմայեցող գրեթէ չէր գրեր, կամ քիչ կը գրեր:

-**Քիչ կը գրեր, բայց ինչ որ գրեր՝ կ'ուզեր որ ըլլայ վերջնական եւ անթերի: Իր ստորագրութիւնը կրող որեւէ գրութեան մէջ չէր կրնար զըտնել փոփոխելի բառ մը, նոյնիսկ քերականական եւ կետադրական ամենն աննշան անփութութիւնը: Ծարտար ոսկերիչի մը պէս՝ կը յղկեր բառերը, կը բիրեղացներ մտածումները, կը խնամէր արտայայտչական ձեւերը: Կը նմանէր միշտ մաքուր եւ կոկիկ հագուող այն մարդոց, որոնք ոչ իսկ փոշի մը կրնան հանդուրժել իրենց հագուստին վրայ ու այնքան հոգ կը տանին իրենց յարդարանքին եւ բարեձեւութեան, կը քալեն այնպէս զգուշաւոր եւ ճշդուած շարժումներով՝ որ կարծէք քալելը տեղ մը հասնելու գործողութիւն մը չէ այլեւս իրենց համար, այլ ինքնին նպատակ մը... (Ա. Ծ., «Նայիրի», նոյն թիւը):**

50-ԱՄԵԱԿ ՄԸ՝... ԱՐՏԱՇԵՍ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՔԻՆ

Գիտեմ, որ աննշան ու արհամարհելի 50-ամեակի մը մասին է խօսքը:

50-ամեակը՝ հազիւ հարիւր էջանի բարակ գիրքի մը, զոր պատրաստեց ու հրատարակեց լիբանանահայ մատենագետ ու մամուլի հետազօտիչ Արտաշէս Տեր Խաչատուրեան (1931-1993) ճի՛շդ կէս դար առաջ, 1969-ին, Պէյրուք:

Գիրքը կը կոչուէր «**Շահան Ռ. Պերպերեան. կենսագրութիւն եւ մատենագիտութիւն**»: Յեղինակը այստեղ բժախնդրօրէն մէկտեղած էր իր ժողոված այն բոլոր տեղեկութիւնները, որոնք կ'առնէին Պերպերեանի կենսագրութեան, կրթական ու մշակութային վաստակին, մամուլի մէջ («**Ո ս տ ա ն**»), «**Ս ի ղ ո ն**», «**Չ ու ար թ յ ո ն**», «**Ա ն դ ա ս տ ա ն**», «**Ա ն ի**» եւ այլն) անոր հրատարակած յօդուածներուն, ինչպէս նաեւ՝ այլոց կողմէ անոր մասին գրուած վկայութիւններու:

Ես այս «ճղճիմ» յիսնամեակը կը յիշատակեմ կարեւորութեամբ ու երախտիքով:

Արտաշէս Տեր Խաչատուրեան, մշեցի ծնողներու զաւակ, Անթիլիասի Դպրեվանքը ուսանած էր 1945-49 եւ ուստի՝ աշակերտած էր Պերպերեանին: Ան իր այս գիրքով դարձաւ այն երախտագետ աշակերտը, որ ո՛չ միայն իր ուսուցչին առաջին ընդարձակ կենսագրութիւնը պատրաստած եղաւ, այլեւ ճամբայ հարթեց անոր իմացական վաստակը ՏՊԱԳԻՐ ԽՕՍԶԻ վերածելու գաղափարին ու շարժումին:

Ահա հո՛ս կը կայանայ վերոնըշեալ 50-ամեակին կարեւորութիւնը:

Արդարեւ, այդ նոյն 1969-ին, արդէն տասներեք տարի անցեր էր Պերպերեանի մահուան թուականէն:

Մեծանուն իմաստասերին անունով հրատարակուած գիրքեր չկային հրատարակի վրայ, բացի պարագայաբար լոյս ընծայուած քանի մը բարակուկ պրակներէ, որոնք բացարձակապէս անբաւարար էին ցուցնելու անոր իմացական մեծի վաստակն ու անսպառ գիտութիւնը: Եւ գլխաւոր հարցն այն էր՝ որ Պերպերեան ԱՆՏԻՊ ԷՋՇԻՐ ալ չունէր:

Բայց... կային Անթիլիասի իր աշակերտներուն ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ, գեղեցկօրէն ու օրինակելի ջանադրութեամբ արձանագրուած դպրոցական տետրակներու մէջ: Անոնք հարազատ ՎԵՐԱԴՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ու համադրումներն էին Պերպերեանի իմաստասիրական ու հոգեբանական դասախօսութիւններուն, դասատուութիւններուն: Փըրկարար լաստեր: Հարկ էր գանտնք խմբագրել ու հրատարակել: Արտաշէս Տեր Խաչատուրեան ա՛յդ է որ կ'առաջարկէր:



Վերոյիշեալ իր գիրքին մէջ ան Պերպերեանը կը բնութագրէր հետեւեալ բարբախուն տողերով:

-**Հմուտ էր բառին իսկական առումով: Տեղեակ էր հոգեբանութեան, ընկերաբանութեան, բնագանցութեան, տրամաբանութեան, բարոյագիտութեան եւ այլն: Եւ տակաւին տեղեակ էր աւագ արուեստի վեց ճիւղերուն - երաժշտութիւն, քանդակագործութիւն, պարարուեստ կամ թատերապար, գրականութիւն (մասնաւորաբար հայ եւ ֆրանսական գրականութիւն), ճարտարապետութիւն եւ նկարչութիւն: Կրցած էր ամբարել ո՛չ միայն տեսական ծախսութիւններ, այլ նաեւ օժտուած էր զանոնք գործնականապէս բեմադրելու, արտասանելու եւ յօրինելու ձիրքերով: Չարմանալի պարագայ՝ մեր ներկայ դարուն, երբ գիտութիւններն ու արուեստները այնքան ընդարձակած են իրենց սահմանները, գտնել տակաւին մարդ մը, որ կարենայ յաջող կերպով համադրել զանոնք՝ առանց մակերեսայնութեան: Եթէ ուզենք գայն նմանցնել ինչ դարերէն դէմքի մը, անվարան այն պիտի ըլլար Արիստոտելը: Անոր պէս կը նմանէր մարդկային քալող համայնագիտականի մը:**

Տեր Խաչատուրեան այնուհետեւ կը յիշեցնէր:

-**Սոկրատ եւ Յիսուս անմահացած են՝ որովհետեւ ունեցած են**

Աշակերտական Անկիւն

ՀԱՏ ՊԶՏԻԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Lusine Ghurghyan

Բանտարկեալ էր: Պատերազմի ատեն գերի ինկած էր թշնամիին ձեռքը: Բանտի խցիկի ասիի չափ պատուհանին ամեն օր զինք կ'այցելէր ճերմակ աղանի մը: Ան իր միակ խօսակիցն էր ու դարձած էր իր միակ մտերիմը: Օրուան ընթացքին անհամբեր կը սպասէր անոր գալուն: Անոր կը պատմէր իր մասին, իր կատարած քաջութիւններուն մասին, համոզումով եւ սիրով իր ծառայելուն մասին: Աղանիին հարցումներ կ'ուղղէր ու ինքն ալ կը պատասխանէր իր իսկ հարցումներուն:

-Ինչո՞ւ այսպէս տխուր ես:
-Չե՞ս տեսներ, որ բանտն եմ, չորս պատի մէջ:
-Ինչո՞ւ: Ի՞նչ ըրած ես որ...
-Թշնամիին դէմ կը կռուէի:
-Չղջացա՞՞ծ ես:
-Բնա՛ւ:
-Ուրեմն,...

-Շատեր պիտի մտածեն, որ ես սխալ գործեր կատարած ըլլալուն հետեւանքով բանտարկուած եմ: Թերեւս նոյնիսկ եղբայրս այդպէս մտածէ:
-Պատմէ՛, պատմէ՛, սիրով պիտի լսեմ քեզ:
-Ի՞նչ պատմեմ: Պատմելէն ի՞նչ օգուտ, երբ օգնող չկայ:
-Վիճակդ շատ դժուար է: Կը տխրիմ քեզի համար:
-Յո՛ւս, այս խուցին մէջ նետուած՝ ուրիշ գործ չունիմ, բացի օրերը հաշուելէ:

-Կ'ուզեմ օգնել քեզի:
-Ինչպե՞ս, ինչպե՞ս:
-Լաւ, մի՛ տխրիր:
-Չիս փրկէ այս տեղէն:
-Ի՞նչ կ'ուզես:
-Ազատութիւն:
-Հասկցայ: Շատ մի՛ խօսիր: Սպասէ՛ ինձի:
-Աղանիին՝ թերեւս թափ տալով՝ թռաւ-գնաց եւ օրերով չերեցաւ:

Իտե՞ր բանտարկեալը գայն տեսնելու յոյսը կորսնցուց: Ի՞նչ պատահած կրնար ըլլալ: Երբ օր մը այդ մասին կը մտածէր՝ աղանին հասաւ՝ կտուցին կտոր մը թուղթ եւ փոքրիկ մատիտ:

-Ահաասիկ եկայ, որ օգնեմ քեզի: Այս ըսելով աղանին թուղթն ու մատիտը կտուցէն ձգեց պատուհանիկէն ներս:



Բանտարկեալը իր շնորհակալութիւնը յայտնեց աղանիին: Գեղեցիկ ձեռագիրով եւ գեղեցիկ ոճով ան թուղթի կտորին վրայ շատ խիտ տողերուն մէջ գրեց իրեն հետ ամբողջ պատահածը, զգացածը: Թուղթը ուղղեց, վրան գրեց եղբորը հասցեն, եւ յանձնեց աղանիին: Աղանին պատուհանին եզրէն կտուցին առաւ բանտարկեալին պգտիկ պատմութիւնը, ճերմակ թերեւրը լայն բացաւ ու շատ չանցաւ կորսուեցաւ բանտարկեալին տեսողութենէն: Բանտի խուցին մէջ իր բարեկամին սրտին մէջ ծիլ տուաւ յոյսը: Օրեր եւ շաբաթներ անցան: Աղանին ա՛լ չվերադարձաւ:

Օր մը, բանտին խուցին ժանգոտած դուռը աղմուկով բացուեցաւ: Բանտարկեալը ազատ էր:

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան Ժ. Կարգ

ՊԱՇՏՏԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Թաղականութիւնը կարիքը ունի.

* Լուսարարի

* Մաքրութեան պաշտօնեայի

Հետաքրքրուողները կրնան դիմել Եկեղեցւոյ քարտուղարութեան:

Հեռ. - 2113424

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր ժողովուրդի գաւակներուն ուրախութեամբ կը տեղեկացնենք թէ Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցին բաց կը պահէ իր դռները ամէն օր առաւօտեան ժամը 8:30-էն մինչեւ կեսօրուան ժամը 1:30:

Հեռաձայն. - 2113424 - 2124268

Facebook. - Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցի

ԳԻՐՔԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԵՆ - 1

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ «ՏԱՌԱՊԱՆՔ» ՀԱՏՈՐԸ



Liana Arghis

Այսուհետեւ պարբերաբար կը ներկայացնեմ գրական գիրք մը՝ վերլուծելով տողերուն տակ թաքնուած բազմապիսի խորհուրդներ, պեղելով ստեղծագործութեան մէջ արտայայտուած տրամադրութիւնները, երանգներն ու գաղափարական ուղղութիւնը: Այսպիսով թե՛ ընթերցողին պատկերացում մը կու տամ գիրքին մասին եւ թե՛ կը քաջալերեմ ընթերցումը:

Volume-էն ներքեմնելով ընտրեցի Մուշեղ Իշխանի «Տառապանք» բանաստեղծական հատորը: Նկատեցի որ Մուշեղ Իշխանի գրիչը հո՛ւս տարբեր է:

Սփիւռքահայ գրողը իր գործերուն մէջ յաճախ դրական գոյներով, գեղուն ու կարթոնի զգացումներու շղարշներով ներկայացուցած է սերը, հայրենի հողը, մայրը, կեանքի պատկերները: Սակայն իր եօթերորդ քերթողական մատենակով (երբ յիսունը անցած էր արդէն) յեղաշրջուած, նոր հոգեվիճակով կեանքի դառն իրականութիւնները կը ներկայացնէ:

Ինքն է, որ չափածոյ բանաստեղծութիւններով, լայնաշունչ վեպերով, պատմուածքներով ընթերցողը կը փոխադրէ իր ոսկեվառ աշխարհը: Սակայն «Տառապանք» հատորին մէջ գերիշխող տրամադրութիւնը սերտօրէն կապ ունի տրտմայոյզ հոգիներու կենցաղին հետ: Յոյսէն ետք ցասումի, նուաճումէն ետք պարտութեան, բարձունքի չհասած թաւալգլոր անկումի, տիրանալէն ետք կորուստի հոգեբուխ, խոր ճիչով գրուած տողերով կ'արտայայտուի գրողը: Հատորը իրատարա կուած է 1968-ին:

Տրտում զգացումներու կայծը միշտ ներկայ է, հոն կան ապականած միջավայրերէ վկայութիւններ, որոնք ընթերցողը իրագ եկ կը դարձնեն կեանքի յոռի երեւոյթներուն: Հոս Մ. Իշխանի տողերը ցնորային ճախարանքներ չեն ներշնչեր: Տուներու երգիչը մեր առօրեայ կեանքէն զանազան հեգտի պարներ կը գծէ: Անոնք երջանկութենէ, ազատութենէ, հաւասարութենէ գրկուածներ են, ամբաստանութենէ եւ անարդարութենէ տառապողներ:

Համամարդկային տառապանքի շղթաներով գալարուած տողերուն մէջ ճշմարիտ արձագանգ մը կայ, որուն մէջ, սակայն, «կեանքի ալիք»ը տեղատուութիւն կ'ապրի: Հոն արեւը փուճ ու նոր լոյսի «կամարներէն» գուրկ է:

Մ. Իշխան յետեղեմնեան սփիւռքահայ բանաստեղծներուն մէջ իւրայատուկ տեղ կը գրաւէ իր քնարերգութեամբ: Սակայն «Տառապանք»ին մէջ, ան վշտի զգացումներով շաղախուած, տարբեր աշխարհայեացքով, անարդարութեան անաւոր հետքերով տեսնելով կը պոռթկայ:

ՏԱՌԱՊԱՆՔ

Մուշեղ Իշխան

«Միրոս կ'արիւնի աշխարհի ցաւով

Որքա՛ն տառապանք Աստուած իմ, չորս դիս...»

Ան թե՛ տիպարներ կը ստեղծէ, թե՛ հոգեվիճակներ կը ներկայացնէ: Տիպարները պարզ, թշուառ ու անմեղ մարդիկ են՝ ճակատագրին դէմ մաքառող ձեռնուսայն հայր մը, Տեր Զօրի տօթերուն լքուած անտերորուկ մը, այրի կին մը, վատառողջ պանդուխտ մը եւ այլն:

Իսկ վախի, անձկութեան ու բազմապիսի տանջանքներու ենթակայ մարդոց հոգեվիճակներու իւրայատուկ ներկայացումը առաւել շնորհքով կ'օժտէ հատորը:

«Աշխարհի ցաւով» հիւանդացող բանաստեղծը ալեկոծ իր հոգիին աչքերով, խարիսխ մը նետելով հերոսներուն հոգիներուն մէջ, կը սուզուի անոնց խորը եւ իրենց հետ միասին կը սաւառնի անձայրածիր տարածքներու վերեւ, երեւելի դարձնելով այլատեսակ, ուղորուն կայլակներ ու փոթորկաշունչ կոհակներ: Տիպարները կը յուզեն մեզ: Կու գայ ատեն մը, պահ մը, երբ ընթերցողը ներդաշնակութիւն մը կը զգայ իր եւ հերոսներուն զգացումներուն միջեւ:

Հեղինակը ընդհանուր պատկերէն բացառութիւն մը ընելով կը բանայ հատորը: «Յուշ է երագի՛ պահը խնդու թեան» արտայայտութեամբ կը սկսի, ապա կայծակնային ու ժգնութեամբ կը նուազէ կեանքի «եղերական համերգ»ը: Ընդդէմ է, որ «սեւ բախտին» նիւթը հիմնական կամ խաբէն է գրութեան, սակայն իւրաքանչիւր քերթուածի մէջ ան կը ստեղծէ անկախ հերոսներ: Անոնք խորիտ մարդիկ են, որոնց անցեալի կամ առօրեայի «քրտնաթոր» ու «դողդղագին» պահերը յաճախ իրենց մէջ պիտի թողուն «վերջ մը խորունկ»:

Մարդոց ապերջանիկ վիճակին հետ, երիւնդանք բնութեան տարբեր եւս մնայլ գոյներ կը ստանան: Հովը, որ «կու տայ քուն հեշտական» այժմ, «ռուբի որոտ ու ճաթիւն»ի նման է, եղանակը, որ «կը ինչէ գերթ քնար», այժմ «դառնակակիծ սրտի դող» կը դառնայ: Եւ այսպէս՝ խամրող պատկերներով, պատմողական քնոյթով, դաժան իրականութիւններով եւ «մութ» բախտի գաղափարներու խտացումով ընթերցողին կը մատուցուի հատորի քերթուածներուն շարքը:

ՉԻՆՈՒՐԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐԹՈՒՐ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ. «ՀՀ ՉԻՆԵԱԼ ՈՒԺԵՐԸ ՅԱԶՈՂԱԾ ԵՆ ԱԵԼԻ ԶԱՆ 140 ՀԵՔԹԱՐ ՏԱՐԱԾՔ ԱԶԱՏԱԳՐԵԼ»

Չինուորական փորձագետ Արթուր Եղիազարեան դիմատետրի իր էջին վրայ գրած է, որ ՀՀ Չինեալ ուժերը յաջողած են աելի քան 140 հեքթար տարածք ազատագրել, որուն հետեանքով հայկական ուժերուն բարձր դիրքերէն ուղիղ Նշանառութեան տակ յայտնուած է Ատրպեյճան-Վրաստան մայրուղին, թիրախային գօտիին մէջ են նաեւ ատրպեյճանական Իքիսճի Շըխլը գիւղը եւ գիւղի ամբողջ ցանքային տարածութիւններն ու արօտավայրերը:



«Հայոց բանակը անգամ մը եւս կը փաստէ, որ գետնի վրայ յառաջխաղացք արձանագրելու եւ գիւտուրական հարցերը դիրաւ լուծելու հըմտութեամբ օժտուած է: Վերջին ամիսներուն, թշնամիին սահմանապահներուն դէմ պայքարի ընթացքին, ՀՀ Չինեալ Ուժերը լուրջ յաջողութիւններ արձանագրած են Տաւուշի մարզի հիւսիսային հատուածին մէջ: Ատրպեյճանի սահմանապահ ծառայութեան ստորաբաժանուները փորձած են դէպի միջդիրքային տարածք յառաջանալ եւ նոր բնագիծ բանալ «Պապաքետար» կոչուող լեռան շրջակայքը, բայց գընդապետ Գրիգորի Խաչատուրովի հրամանատարութեամբ գործող ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան 3-րդ բանակային զօրամիաւորման մարտական ստորաբաժանուներուն դիմադրութեան հանդիպելով՝ ստիպուած իրենց տարածքին մէջ մնացած են: Գերագանցելով հակառակորդը՝ ՀՀ Չինեալ ուժերուն ստորաբաժանուները կրցած են աելի քան 140 հեքթար տարածք ազատագրել:

ՀՀ Չինեալ ուժերուն արդիւնաւետ գործողութեան հետեանքով կանգ առած է ոչ միայն թշնամիին սադրանքը, որ Հայաստան-Վրաստան մայրուղին վրայ նպատակ ունէր վերահսկողութիւն հաստատել, այլ նաեւ ատրպեյճանական իշխանութիւններու եւ պետական քարոզչամեքենայի համար յանկարծակի շրջադարձի պարագային հայկական ուժերուն ձեռք բերած գերադաս դիրքերէն ուղիղ Նշանառութեան տակ յայտնուած է Ատրպեյճան-Վրաստան մայրուղին: Թիրախային գօտիի մէջ յայտնուած են նաեւ ատրպեյճանական Իքիսճի Շըխլը գիւղը եւ գիւղի ամբողջ ցանքա-

յին տարածութիւններն ու արօտավայրերը: Աելի կարեւոր է այն հանգամանքը, որ եթէ թշնամին յաջողէր իր յառաջանալու մտայղացումը իրականացնել, պիտի վտանգուէր Վրաստանէն Հայաստանի Հանրապետութիւն մտնող կազատար խողովակաշարի անվտանգութիւնը: Սա ՀՀ-ի համար կենսական քայլ էր:

Փորձելով կանխել խուճապի տարածումը բնակչութեան մօտ, ինչպէս նաեւ բնակչութիւնը ոգեւորող կեղծ լուրեր մատուցելով՝ ատրպեյճանական քարոզչամեքենան պարբերաբար կը դիմէ տեղեկատուական պատերազմի՝ հրապարակելով տեղեկութիւն առ այն, որ իբրեւ թէ Ատրպեյճանի սահմանապահները յաջողութիւն եւ յառաջխաղացք արձանագրած են: Իրականութեան մէջ, վերջին շրջանին ատրպեյճանական զիւտուրը կրցած է փոքր տարածք գրաւել, սակայն ոչ թէ Հայաստանէն, այլ՝ դրացի Վրաստանէն: Այս մասին կրնաք աղմկայարոյց գանազան նիւթեր կարդալ վրացական մամուլին մէջ: Փաստօրէն թշնամին չյաջողեցաւ Հայաստանի սահմանին աելի մօտենալ:

Սովորաբար հայկական կողմը նման դէպքերուն լռութիւնը կը պահէ, բայց ի միտի ունենալով թշնամիին ապատեղեկատուական արշաւը մեզի դէմ՝ կը կարծեմ, որ ՀՀ բնակչութիւնը այս իրողութիւնը պէտք էր իմանար, որպէսզի ապատեղեկատուական քարոզչութեան գոհ չդառնար:

Վերջին գործողութիւններուն պարագային ՀՀ Չինուած ուժերը յառաջանալով նոր բնագիծին մէջ ոչ միայն կրցան աելի ամրապնդել սահմանակից մեր գիւղերու եւ ճամբաներու անվտանգութիւնը, այլեւ կրցան ատրպեյճանական մայրուղին վերահսկողութեան տակ առնել: Սա պէտք է Պաքուի իշխանութիւններուն դաս ըլլայ: Անոնք թող մեղաւորներ փնտռեն իրենց բարձրաստիճան, ապաշնորհ գիւտուրականներուն մէջ:

Այսպէս պէտք է պատժուի հակառակորդը՝ իր ամէն մէկ նախայարձակ գործողութեան համար, ստանալով արժանի հակայարձակում», գրած է Արթուր Եղիազարեան:

Թուրքիոյ նուրջ

ՕԶԹՐԱՔ. «ԷՐՏՈՂԱՆ ՊԵՏԷ ԸՆԴՈՒՆԻ ՈՐ ԴԱԽԱՆԱՆԱԾ Է ՍՈՒՐԻՈՅ»

«Սանա».- Թուրքիոյ Հանրապետական Ժողովուրդի Կուսակցութեան (CHP) փոխնախագահ Ֆայէթ Օզթրաք հաստատեց, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան Թուրքիոյ իշխանութիւնը ստանձնելէն ետք, տարածաշրջանի մէջ իրեական եւ ամերիկեան ծրագրերու իրականացման գործիք հանդիսացաւ: Օզթրաք, 20 Օգոստոսին Անգարայի մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսին ընթացքին ըսաւ, որ Էրտողան ամերիկացիներուն դաւակիցը դարձաւ այսպէս կոչուած Միջին Արեւելքի նոր ծրագիրը իրականացնելու համար: Մինչդէռ Էրտողանի կուսակցութիւնն ու Թուրքիոյ մէջ գործող այլ կուսակցութիւններ դէմ էին 2011-էն ի վեր Էրտողանի վարչակարգին Սուրիոյ ներքին հարցերուն բարբարոսական միջամտութեան եւ Թուրքիոյ սահմանը ահաբեկիչներու տեղաւորման եւ անոնց դէպի Սուրիա հոսքին միջանցք դարձնելուն:

Օզթրաք շեշտեց, որ Էրտողան ներքաշուած էր Սուրիոյ դէմ իսրայելեան եւ ամերիկեան դաւադրական ծրագրերուն մէջ, ուստի ան պէտք է խստովանի Թուրքիոյ ժողովուրդին այս բոլորը եւ ներկայացնէ, թէ ինչո՞ւ ծառայած է դաւադրական այս ծրագրերու իրագործման, իսկ վերջերս նաեւ ԱՄՆ-ի հետ Սուրիոյ հիւսիսային տարածքներուն վրայ «Ապահովական գօտի» հաստատելուն, որ իրականութեան մէջ Սուրիոյ ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան սպառնալիք կը համարուի:

Յիշենք, որ Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը նախորդ ամիս կտրականապէս մերժեց ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ համաձայնութեամբ «Անվտանգ գօտի» ստեղծելու նախաձեռնութիւնը՝ զայն համարելով թուրք-ամերիկեան դաւադրական գործակցութեան յստակ ապացոյց, որ իրականութեան մէջ կը ծառայէ Իսրայելի բռնատիրական եւ Թուրքիոյ ծաւալապաշտական շահերուն:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Կրթական Խորհուրդը 2019-2020 դպրոցական տարեշրջանի համար կարիքը ունի՝

1. Տնօրէնի
2. Տեսուչի
3. Հաշուապահի
4. Զարտուղարի
5. Ծառայողի (տնտես հայրիկ- տնտես մայրիկ)
6. Հայերէն, Արաբերէն, Անգլերէն եւ այլ մասնագիտութեանց ուսուցիչ-ուսուցչուհիներու:

Թեկնածուները պարտին ունենալ.

- Համալսարանական վկայական վաւերացուած սուրիական պետութեան կողմէ:
- Կրթական ձեռնհասութեան վկայագիր կամ երկու եւ աելի տարիներու որբէ վարժարանի մէջ դասաւանդման փորձառութիւնը հաստատող վկայագիր:
- Մանկավարժական փորձ:
- Վարչական աշխատանքներու գիտութիւն, փորձ եւ հմտութիւն:

Փափաքողները կրնան դիմել Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդի գործավարութեան գրասենեակ:

Սուրիոյ Հայ Աւետ. Համայնքի Կրթական Խորհուրդը
Հեռաձայն՝ 4642450 - 0991 466 602

ՄՏԱՄԱՐԶԱՆԲ



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 308)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Աւագակներու խումբ:
- 2- Հակառակ՝ յորդահոս: Թատերական ներկայացումի դադար:
- 3- Շարժուն մեքենայի ուղղութիւն տուող գործիք: Հանքային համեմ: 1007:
- 4- Գրաբար՝ օր: Յանձնարարութիւն:
- 5- Հակառակ՝ 6001: Յաւի ճիչ: Անորոշ յօդ:
- 6- Ձիւթ: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Հակառակ՝ էական բայ:
- 7- Եղելութիւն:
- 8- Պայտ: Խառնատառ՝ ոստ:
- 9- Խոշոր կապոց: Հարցական դերանուն:
- 10- Տառի մը անունը: Արական անուն: Հակառակ՝ ահաւոր ծայն:
- 11- Յետոյ: Կրկնուած ծայնաւորներ: Հակառակ՝ տառի մը անունը:
- 12- Սնտուկ:

Ուղղահայեաց

- 1- Վանքային համալիր, Տաւուշ մարզի Դիլիջան քաղաքէն 18 քմ. հիւսիս: Տարիքը առած:
- 2- Շաղկապ: Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը:
- 3- Շատակներ, փորը պաշտող:
- 4- Ցուցական դերանուն: Ջրաշոգի: Ռամկօրէն՝ այր:
- 5- Հայ նահապետ: Նորութիւն յառաջ բերող մարդ:
- 6- Ովկիանոս մը: Աւանդ:
- 7- Հարցական դերանուն: Կռնակի ոսկոր:
- 8- Մետաղ թափելու կաղապար:
- 9- Մեզ, մշուշ: Տառի մը անունը:
- 10- Մեղուններու մեղրը ուտող պիծակ: Հակառակ՝ գործունեայ, աշխոյժ:
- 11- Կրկնուած բաղաձայններ: Հակառակ՝ շաղկապ:
- 12- Արշիլ Կորբիի 1947-ի ստեղծագործութիւններէն:

ՄԵՄ-Ի ԲԱՆԱԿՈՒՄԸ...

Սկիզբ՝ էջ 16

ընկհ.Բէկին, որ ճիգ եւ ջանք չխնայեց մեզ կուշտ պահելու եւ համեղ կերակուրներ պատրաստելու:

Բանակում կազմակերպելը պատերազմական պայմաններու մէջ մեծ ջանքերու կը կարօտի, սակայն ՍԵՄ-ին համար յոյժ կարեւոր այս գործունեութիւնը ամեն գոհորդութիւններ յանձն առնելով իրականացուցին մեր ընկերները, իսկ մեք ներշնչուեցանք ընկերային այս առողջ մթնոլորտին պահպանումով, ու համոզուեցանք որ ամեն դժուարութիւն կարելի է յաղթահարել կամքի եւ հաւատքի ուժով, բայց մասնաւոր աշխատանքով ու պա-

տասխանատուութիւն կրելու յանձնառութեամբ:

ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ...

Սկիզբ՝ էջ 6

ներուն հոգիները լուսաւորէ իր հետը փոխադրելով երկնքի արքայութիւնը: Ընդունինք որ Մարիամ, իբր «Կենդանի Տապանակ», բարեխօս եւ վկայ պիտի ըլլայ, Քրիստոսի դիմաց, մեր անունները Կեանքի գիրքին մէջ գրելու:

Այսօր տօնն է ուրախութեան: Տօնն է Աստուածամօր Վերափոխման խորհուրդով մխիթարուելու: Հետեւաբար, վերանորոգենք մեր ուխտը առաքինազարդ եւ Աստուածահաճոյ կեանք մը ապրելու համար:

Պատրաստեց Մարինա Զիւլքրոշեան-Պօղիկեան
ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 307)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

				8		6	2	
		1		2	9	5		
	4		6	1			3	
	8			6		7		
		7		8		4		
		9		3			1	
	1			4	6		5	9
		4	1					
5	9							

ՊԱՅՐՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 5)

Վահան Թէքեանի Բանաստեղծութիւնները ջնջելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 10 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Թէքեանի բանաստեղծութիւններէն մէկը (երկու բառ):

ա	ե	ս	ս	ի	բ	ե	ց	ի	ա
ի	ն	ք	ա	ն	ւ	ն	դ	դ	
մ	կ	ց	ե	վ	ա	յ	ն	մ	ն
գ	ա	ե	ա	գ	բ	ի	չ	ա	ւ
ի	ն	բ	ծ	ւ	մ	ա	ի	հ	ն
ւ	թ	ա	ի	ք	գ	է	ն	է	բ
դ	ե	գ	ա	մ	դ	ն	չ	բ	ն
ը	դ	փ	ս	է	բ	ս	ա	գ	է
ն	ա	հ	ա	տ	ա	կ	ա	ց	բ
փ	վ	ե	բ	ջ	ի	ն	ի	կ	ը

«Իմ Գիւղը», «Ես Սիրեցի», «Անունը», «Փափաք», «Անցաւ Գնաց», «Երագ», «Աղուորները», «Կանթեղ», «Մահերգ Նահատակաց», «Բեզմէ Ռչինէ», «Իմ Վերջին Սերս»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 307)

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 306)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	է	բ	ն	ւ	ծ		լ	ն	կ		
2	մ	տ	ա	բ	ա	ց	ն	ւ	ք	ի	ւ	ն
3	ա	ք						ն	բ	մ		գ
4	յ	ի	ս	ն	ա	կ		լ	ա	յ	ն	
5	ք	ն	ա	հ	ա	տ			տ	ա		ւ
6		է	յ			ա	լ		է		դ	դ
7	ա	կ	ա	հ	կ	ն	ւ	լ	ն			
8	ի	ն	թ	ա	կ		բ	ն	ա	ւ	բ	
9	ա	ն	ն	ա		ի	ն	վ	ա	շ		
10		ս	ն	ա	ք		կ	ա	հ	մ	ի	
11	լ		վ	ք	ա	գ		հ	ա	գ	ա	բ
12	ի	ն	ա		ւ	ա	կ	ա	տ		ն	

8	7	3	4	1	5	2	6	9
1	2	6	9	7	3	4	5	8
4	5	9	6	8	2	3	1	7
9	4	7	5	2	8	1	3	6
5	6	1	3	9	4	8	7	2
2	3	8	1	6	7	9	4	5
6	8	2	7	4	1	5	9	3
7	1	5	8	3	9	6	2	4
3	9	4	2	5	6	7	8	1

ՊԱՅՐՈՒԾ ԲԱՌ (ՄՊ 4)

Պահուած բառն է՝ «Առկայծ ճրագ»

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ



Առողջական հարցեր պիտի դիմագրավեք: Ձեր առողջության հոգ տարեք: Հետևեցեք մարգանքի եւ սևնդարար ուտելիքներ օգտագործեցեք:

ՅՈՒԼ



Որեւէ ծրագրի գործադրության մի՛ սկսիք այս շրջանին: Աշխատեցե՛ք աւարտել ձեր գործերը: Ուշադիր եղեք խաբեբայ մարդոցմէ, որոնք կըրնան կողոպտել ձեզ:

ԵՐԿՈՒՐԵԱԿ



Մի՛ թերանաք ձեր պարտականութիւններուն մէջ: Ընկերային միջավայրին մէջ ուշադիր եղեք անհասկացողութենէ եւ անհամաձայնութենէ:

ԽԵՅՁԵՏԻՆ



Պարտաճանաչ եղեք: Դժուար շաբաթ մըն է, սակայն դուք յաջողութիւն մը պիտի արձանագրեք: Լաւ դասաւորեցեք ձեր ժամանակը:

ԱՌԻԾ



Փորձառու մարդոց խրատին ակնաչ տուեք: Ձեր առողջության հոգ տարեք:

ԿՈՅՍ



Պայմանագիր մը ստորագրելու առիթով քննարկումի պիտի մասնակցիք ու համարձակօրէն ձեր կարծիքը պիտի տաք:

ԿԵԻՈՋ



Օդափոխութիւնն ու հանգիստը դրականօրէն պիտի ազդեն ձեր աշխատանքի եւ ծրագիրներու վերաթարմացման վրայ:

ԿԱՐԻՃ



Նոր մարդոց պիտի ծանօթանաք: Չզացական եւ աշխատանքային գետնի վրայ խոստումնալից շաբաթ մըն է:

ԱՐԵՂՆԱՌՐ



Աշխատանքի մարզին մէջ ձեր քայլերը պիտի դանդաղին, եւ դուք որոշ ժամանակ տեղեւայլի մէջ պիտի ըլլաք: Առիթ մի՛ տաք, որ ձեր մրցակիցները յառաջանան ի վնաս ձեզի:

ԱՅԾԵՂԶԻՐ



Այժմեական նիւթը պիտի քըննարկեք ձեր ընկերության մէջ: Ձեր առաջարկները պիտի նպաստեն եկամուտի աճին:

ՋՐՈՍ



Խնայող եղեք, որպէսզի նեղ կացութեան չմատուիք ասպագային:

ՁՈՎ



Համբերատար եղեք: Այս շրջանին որեւէ պայմանագիր մի՛ ստորագրեք: Նախընտրելի է՝ մինակ կատարեք ձեզի վստահուած բոլոր պարտականութիւնները:



Սեան Ագարիկեան-Պարմաքսեան

ԿԻՏՐՈՆՈՎ ՋՈՒՐ ԽՄԵԼՈՒ ՏԱՍԸ ԱՌՎԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1-Անաւօտեան քաղցած մէկ գաւաթ կիտրոնով ջուր ըմպելը կը բարելաւէ մեր մարմնի նիւթափոխանակութեան համակարգը: Ան կ'աշխուժացնէ սնունդի իւրացման գործընթացը եւ կ'օգնէ ձեր բազատուելու ստամոքսի այրուածքէն:

2-Կիտրոնի բոյրը կը բարձրացնէ տրամադրութիւնը: Ան կը հանգստացնէ անհատի ջիղերու համակարգը եւ կը հեռացնէ գայն վախի եւ տխրութեան զգացումներէն:

3-Կը նուազեցնէ սրտի հիւանդութիւններու առաջացման հաւանականութիւնը: Ան կը մաքրէ արիւնը եւ արիւնը եւ կը բարելաւէ անօթներու պատերու առաձգականութիւնը:

4-Կիտրոնով ջուր խմելը հակաբորբոքային միջոց է: Ընդհանրապէս կիտրոնի պարունակած C կենսանիւթին, ան կը պայքարի վարակներու դէմ եւ կը բարձրացնէ օրկանիզ մի պաշտպանական ուժը եւ կը նուազեցնէ փոխանցիկ հիւանդութիւններով վարակուելու հաւանականութիւնը:

5-Անաւօտեան կիտրոնով ջուր խմելը, ո՛չ միայն առողջութեան այլ գեղեցկութեան միջոց է: Մաքրելով մարմինը, կիտրոնով ջուրը զգալիօրէն կը գեղեցկացնէ մաշկի, մազերու եղունգներու տեսքը:

6-Ան կ'օգնէ որ կիտրոնային ջուրը վերահիշուէ մեր ախորժակին:

7-Եթէ մարգանք կը կիրարկենք, պէտք է մեր սննդականոնին մէջ ներառենք կիտրոնի հիւթը, որովհետեւ ան կը չեղոքացնէ մկանի եւ յօդերու ցաւերը: 8-Մեր օրկանիզ մը կը մաքրէ տոքսիններէ եւ կը հեռացնէ վնասակար նիւթերը:

9-Կ'ամրապնդէ մարմնի դիմադրողական համակարգը: Կիտրոնի հիւթը կենսանիւթերու եւ հանքանիւթերու հիւանալի աղբիւր է, ան կը պարունակէ A, B, C. կենսանիւթեր, ֆոսֆոր, զինկ, երկաթ եւ քալսիում:

10-Կիտրոնը հակաօքսիտանդ է: Ան կը դանդաղեցնէ ձեր քաղցած գործընթացը եւ կը պաշտպանէ քաղցկեղի առաջացման հաւանականութիւնը: Կիտրոնի ստեղծած բնական, թթուային միջավայրը բացասաբար կ'ազդէ քաղցկեղի բջիջներու առաջացման:

ԻՆՉԱՎ՛Ն ԱՊԱՏՐԱՍՏԵԼ ԿԻՏՐՈՆՈՎ ՋՈՒՐ:

Կէս բնական կիտրոնի հիւթը ամէն օր մէկ գաւաթ գաղջ ջուրին եւ ըմպել առաւօտեան նախաճաշէն առաջ: Կարելի է նաեւ ամէն օր մէկ ըմպել:

Մեղրով եւ Կիտրոնով Դիմակ

Գեղեցիկ, երիտասարդ եւ գրաւիչ տեսք ունենալը իւրաքանչիւր կնոջ երազանքն է, այդ իսկ պատճառով անոնք յաճախ դիմայարդարման եւ վարսայարդարման սրահներ կ'այցելեն եւ երբեմն թաւ կառքէք քսուկներ կ'օգտագործեն իրենց մաշկը փայլուն պահելու համար: Սակայն, լաւագոյն արդիւնքի հասնելու համար պայման չէ մեծ գումար ծախսել, երբեմն հրաշալի դիմակներ եւ քսուկներ կարելի է ստանալ բնութեան պարգեւած պտուղներէ բանջարեղէնէ եւ բոյսերէ: Տան մէջ պատրաստուող լաւագոյն դիմակներէն մէկը կիտրոնի դիմակն է:

Կիտրոնի օգտակար յատկանիշները ծանօթ են արդէն: Բացի առողջարար իր յատկանիշներէն, կիտրոնը բարեբար ազդեցութիւն ունի նաեւ մաշկին վրայ: Ան երիտասարդ եւ մաքուր կը պահէ մաշկը, քանի որ մաշկին անհրաժեշտ բազմաթիւ տարրեր կը պարունակէ: C կենսանիւթը կ'օգնէ էլաստիկի եւ կալոժէնի արտադրատուրին: A կենսանիւթը կը պայքարի բորբոքումներու եւ մաշկի ծերացումին դէմ: K կենսանիւթը կը վերացնէ կնճիռները: Գեղեցկագիտական նիւթերուն մէջ կիտրոնը կ'օգտագործեն քանի մը նպատակներով:

1- Մաշկը ճերմկեցնելու

2- Բշտիկներէն եւ մեռած բջիջներէն ձեր բազատելու

3- Մաշկը թարմացնելու եւ անոր ծակտիկները գոցելու:

Ուշադրութի՛ւն. Կիտրոնի հիւթին չափազանցուած օգտագործումը կրնայ գրգռել մաշկը, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է չափաւոր քանակով օգտագործել գայն, մորթին զգայնութեան եւ տեսակին համաձայն:

Կիտրոնի դիմակները օգտակար են մաշկի բոլոր տեսակներուն համար: Սակայն զգայուն եւ չոր մաշկ ունեցող կանայք պէտք է ուշադիր ըլլան եւ բաղադրութեան միշտ իւղոտ տարր (օրինակ՝ ձիթապտուղի ձեթ) ամէն օր, որպէսզի չվնասեն դէմքին մաշկը:

Մեղրով եւ կիտրոնով դիմակ

Այս դիմակը մաքրող եւ երիտասարդացնող հրաշալի միջոց է: Դիմակը պատրաստելու համար կը պահանջուի.

-Մէկ կիտրոնի հիւթ

-2ճ/դգալ մեղր:

Ստացուած խառնուրդը պէտք է քսել դէմքին եւ 30 վայրկեան անց մաքրել գաղջ ջուրով:

Ուշադրութիւն: Այս դիմակը արգիլուած է օգտագործել բաղադրիչներէն որեւէ մէկուն հանդէպ զգայնութիւն ունեցող կանանց:



ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ... Սկիզբ՝ էջ 5

ցաւ միայն «վերնախաւ»ը հակակրօնական դիտարկութեամբ, այլ նաեւ այն մտասելեռումով, որ ի վերջոյ, ամենէն լայն իմաստով՝ արտադրող զանգուածն էր ընդհանուրը ընդգրկող՝ համապարփակ մեքենան, ճարտարարուեստն ու վարչամեքենաները իր ուսերուն կրողը, յառաջ տանողը: Առանց արտադրողական ձեռքին, մարդկութեան շոգեմալը ուշ կամ կանուխ պիտի մատնուէր աւագախրումի, անդամալուծութեան ու կորուստի, նստած ճիւղ սղոցելու կացութեան...

Քաղաքական ու ընկերային-տնտեսական աշխարհին մէջ, ծնունդ առին ու իրենց բազմաճիւղ զարգացումները ապրեցան իշխանաւոր-դրամատերներու եւ ենթակայ-արտադրողներու միջեւ պայմանագրութիւններու հասկացութիւնները: Եթէ «Մակնա Քարթա» մը եւ նման հոչակագիրներ կը հանդիսանային մարդկութեան երկու գլխաւոր դասերուն միջեւ ամենէն կանուխ համաձայնութիւնները, մարդոց իրաւունքներուն արմատները հաստատողները (կարելի է երթալ նաեւ մինչեւ Զամուրաբիի օրերը), ճարտարարուեստի Յեղափոխութեան դարաշրջանները մղում տուին գործատեր-աշխատողներու միջեւ տեսակի հաւասարակշռութեան հետամտութեան, այն մեկնակետով ու մտասելեռումով, որ մեքենային բարիքները եւ անոր ապահոված նիւթական անսպառ միջոցները միայն գայն ունեցողին պէտք չէ բաշխուին, այլ անկէ պէտք է օգտուին նաեւ գայն բանեցողները, իբրեւ աշխատող զանգուած ճանչցուած մեծամասնութիւնը: Եւ սա՛ դասակարգային պայքարին տուաւ նոր դիմագիծ, առանց բոլորովին գունափոխելու հինէն ժառանգ մնացած հակադրութիւնը:

ՀԱԿԱԿԵՌՈՂ ԳՈՐԾՕՆՆԵՐ

Աշխատաւորին՝ արտադրող զանգուածին իրաւունքներու հետապնդումն ու պաշտպանութիւնը զգեցան տարբեր արտայայտութիւններ, որոնք զարգացան երկու գլխաւոր գիծերու վրայ. մտաւորական-գաղափարական եւ գործնական-յեղափոխական: Մտաւորականները, որոնք իմաստութիւնն ու շրջահայեացութիւնը ունէին իրողութիւնները եւ հարցերը դիտելու-ընկալելու շատ անելի տարածուն եւ հեռատես մօտեցումով, սկսան իրարու արծագանգ հանդիսանալ մարդուն բարոյութիւնը հետապնդելու իրենց մտածումներով, ու բնականաբար դարձան աշխատողներու համար ներշնչման աղբիւրներ, անոնց գործնական քայլերը առաջնորդողներ: Այդ առաջնորդող միտքերը (որոնց ցանկագրումն ու անոնց կերտած պատմութեան անդրադառնալը մեզ պիտի տանի տարբեր խորացումի եւ ուղղութիւններու, բոլորն ալ ոչ-արհամարհելի), ժամանակի ընթացքին ծնունդ տուին գաղափարական տարբեր դպրոցներու, ուր հիմնականին մէջ լուծումներ կը հետապնդուէին գործատեր-դրամատեր եւ արտադրող-աշխատող դասերուն միջեւ: Քաղաքական-ընկերաբանական այդ դպրոցները ունեցան տարբեր անուանումներ, որակուեցան իբրեւ աջ-ձախ, չափաւորական կամ ծայրայեղական, սակայն եթէ փորձենք այդ բոլորը սահմանել իրենց ամենէն պարզ ձեւին մէջ, իբրեւ հասարակ յայտարարի՝ կը հասնինք ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԴՈՒ ՏԱՐԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԿԱՍԿԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ: Եւ եթէ քրիստոնէութիւնը կը ճանչցուի իբրեւ կրօնները գերագոյնին եւ կատարելագոյնին հասցնելու ներուժը ունեցող վարդապետութիւն, որ կը նպատակադրէ մարդը Աստուծմ առաջ մօտեցնել ՄԱՐԴՈՒՆ (հակառակ կիրարկողներուն ձախաւերութիւններուն ու ինքնէկ թերութիւններուն), ընկերային հաւասարակշռութիւնն ստեղծելու միտող վարդապետութիւններուն գերագոյնն ալ եղաւ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ (հակառակ անոր դէմ վանդակաւ տրամադրութիւն ստեղծող՝ Զամայնավարութեան, խեղաթիրող այլ դպրոցներու, կամ՝ Նոյնինքն ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆը անճիշդ ու ձախաւեր կիրարկողներու):

Ընկերաբաններու եւ մարդու իրաւունքներու կենսագործման հետամուտ շարժումներուն՝ այսօրուան մարդկութիւնը, հիմնականին մէջ արտադրող զանգուածը, աշխատաւորը շատ բան կը պարտին կենսքի-ապրուստի պայմաններու բարելաման իմաստով: Այդ շարժումներն էին, որ ծնունդ տուին աշխատաւորական խմբակցութիւններու ձեւաւորման եւ հօգորացման, արհեստակցական եւ այլ միութիւններու կազմակերպման: Միտքին ընդամաքող գործնական քայլերուն՝ գործադուլներու եւ նման յեղափոխական քայլերու շնորհիւ էր որ աշխատողները իրաւունք ստացան կրօն-ճատելու իրենց աշխատանքի ժամերը, մինչեւ որ ընդհանրացան օրական 8 ժամի դրութիւնը, արձակուրդի եւ այլ իրաւունքներ: Նոյն շարժումներուն իբրեւ արդիւնք, անչափահասները գեր կացուցուեցան ո՛չ միայն տաժանակիր, այլ նաեւ ընդհանրապէս աշխատանքի հարկադրանքէն: Աշխատող կիներ հետզհետէ յառաջ տարին իրենց իրաւունքները: Այս շարժումներուն ու պայքարներուն ճամբով էր որ զարգացում ապրեցան աշխատանքի մէջ ու արկածներու դէմ ապահովագրութեան, յաւելեալ աշխատանքը համապատասխան վարձատրութեան արժանացնելու, վճարովի արձակուրդի կամ հիւանդութեան շրջանին անվճար չթողուելու, եւ տակաւին, (հետզհետէ անելի մեծ թիւ կազմող երկիրներու մէջ) որոշ տարիքէ մը ետք հանգստեան կոչուելու եւ ապրուստի որոշ ապահովութիւն ունենալու կարելիութիւնները, առողջական-հիւանդանոցային խնամքի հնարաւորութիւնները (նման կալուածներու չարաշահումն ու որոշ անպատեհութիւններ՝ բոլորովին այլ հարց): Իրաւունքներու

հետապնդման պայքարը ունի իր երկար պատմութիւնն ու ելեւէջները, որոնց կը բաւականանանք անդրադառնալով այսպէս՝ հպանցիկ նշումներով միայն. սակայն համայնապատկերը աչքի առջեւ ունենալով, այսօր բոլորը իրարու զօթող կարմիր գիծերը կարելի է տեսնել դիւրութեամբ:

Եզրակացնելու, սակայն ոչ՝ քըն-նարկումը սպառած սեպտիմ տրամադրութեամբ, նշենք, որ մարդը, մարդուն բարոյութիւնը հետապնդող մտաւորականն ու աշխատող խմբակցութիւնները, տարբեր ժամանակներու, եւ ժամանակի զարգացման հետ, աշխատած ու պայքարած են ի խնդիր ճարտարարուեստի Յեղափոխութեան ստեղծած անպատեհութիւնները հակակշռելու եւ ընկերութեան մէջ անելի արդար հաւասարակշռութիւն յառաջ բերելու նպատակով, եւ եթէ լիակատար յաջողութեան չեն հասած, ձախողութեան ալ չեն մատնուած, այլ յաջողած են որոշ հաւասարակշռութիւն ստեղծել՝ աշխատող զանգուածին իրաւունքները պաշտպանելու եւ ապահովելու ճամբուն վրայ: Այլ խօսքով, մեքենայացումի դարաշրջանին ընձեռած բարիքներուն դիմաց, մարդը շարունակած է անպատեհութիւնները հակակշռելու իր ուղին եւ քայլ առքայլ ՅԵՂԱՓՈՒՄԸՆ ԵՒ ԿԵՆՍԵՐ: Այս պայքարի պատմութիւնն ու արձանագրուած յաջողութիւնները գրաւական ու երաշխիք են, որ թուայնացումի հետեւանքներուն դարմանումն ալ պէտք է ու կըր-նայ՝ ստեղծել Նոյն ուժգնութեամբ նոր յեղափոխութիւն մը: Սա արդէն առանձին լուսարձակ կը կարօտի:

ԽՈՐՆ ՈՒ...

Սկիզբ՝ էջ 8

Եացակամութիւնն ու վստահութիւնը, օգտագործելով խաբուսիկ ու շլացուցիչ միջոցներ, միանգամայն պատիր ու ներգրաւիչ լեզու:

Մեծախօսիկ մարդը ընդհանրապէս գործի մէջ կը կաղայ, կը խարխափէ, կ'ընկրկի ու կը ձախողի:

Բնականաբար կեղծաւոր, երկերես, անսկզբունք, անողնայար եւ անվստահելի մարդոց հետ վարուելու լաւագոյն կերպը կը մնայ մերկացնել անոնց անհարագատ, ծղպտուն եւ ստապատիր ինքնութիւնը, անհաստատ ու լարախաղաղ կողմնորոշումները... Որպէսզի, թէկուզ որոշ չափով խախնի եւ անդրադառնան, թէ մարդիկ այնքան ալ պարզամիտ եւ անգիտակից չեն, այլ ի վիճակի են դիւրութեամբ գատորոշելու լաւն ու վատը, գեղեցիկն ու սոգեղը, օգտակարն ու վնասակարը ճիշդն ու սխալը, հիմնականն ու մակերեսայինը, կեղծն ու հարագատը, մնայունն ու անցողակին եւայլն:

Եթէ մնամէջ ու շռայլուած խօսքը, անբովանդակ ճառերը, անպարունակ նշանախօսքերը, անհիմն քարոզչութիւնը, անիրատես եւ ցանկապաշտական նկրտումները ժողովուրդներու յաջողութեան եւ յառաջդիմութեան երաշխիքներ հանդիսանային, այսօր հսկայական նուաճումներ արձանագրած ճարտարարուեստական բարգաւաճ երկիրներու ցուցակին վրայ պարագլուխի դիրք պիտի գրաւէին բոլորովին տարբեր ազգերու եւ հաւաքականութիւններու անուններ:

ՔՐՄԱՊԵՏ...

Սկիզբ՝ էջ 9

Երախտապարտ աշակերտներ, որոնք ուզած են փրկել իրենց մեծ Ուսուցիչներուն թողօնները: Սակայն Շ. Պերպերեանին զլացուեցաւ այդ բարիքը եւ ան ցարդ կը մնայ ծանօթ անծանօթը: Անձի մը ծանօթացումը կապ ունի այդ անձին գործին արժեքումին, հրատարակութեան ու վերահրատարակութեան հետ:

Արտաշես Տեր Խաչատուրեանի միտք բանին ուրիշ բան չէր ուրեմն, եթէ ոչ՝ ազդանշան մը տալ (առ որ անկ է), ձեռնամուխ ըլլալու Շահան Պերպերեանի գործերուն հրատարակութեան:

Եւ բարեբախտաբար, այդ ազդանշանին արձագանգը չուշացաւ:

(շարունակելի-5)

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիլվերշեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան
Յուշիկ Ղազարեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեան
Հաշուապահ՝ Սեւակ Կիլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



Ռաֆֆի Միլսհեան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԼԵՈՆ ԱՐՈՆԵԱՆ ՍԵՆՔ ԼՈՒԻՍԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Հայաստանի առաջատար ճատրակ խաղացող Լեոն Արոնեան Grand Chess Tour-ի շարքի Սենթ Լուիսի մրցաշարքին դարձավ արագ և կայծակ-



Ֆրանսացի Մաքսիմ Վաշիե-Լագրավը: Սենթ Լուիսի մրցանակային ֆուտբոլը կազմե 150 հազար ամերիկեան տոլար:

ԱՐԱՐԱՏ ԱՐՄԵՆԻԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՎՐԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԸ

Ֆուտբոլի Հայաստանի ֆուտբոլի ասոցիացիայի «Իւրոպա-լիգ» չորրորդ փուլ, պարտութեան մատնելով Վրաստանի



Ֆուտբոլի Հայաստանի ֆուտբոլի ասոցիացիայի «Իւրոպա-լիգ» չորրորդ փուլ, պարտութեան մատնելով Վրաստանի Ֆուտբոլի Լեոն Արոնեան Սենթ Լուիսի մրցաշարքին դարձավ արագ և կայծակ-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՓԱՐԻՉ-ՍԱՆ ԺԵՐՄԱՆ ՆԵՅՄԱՐԻ ՓՈՒՍԻՆՍԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՏՈՒՄ ՌԵԱԼԻՆ

Ֆրանսայի ֆուտբոլի ասոցիացիայի Փարիզ Սան ժերմանի ղեկավարները կը շարունակեն իրենց ճշունները բանեցնել սպանական երկու լաւագոյն ակումբ-



Ֆրանսայի ֆուտբոլի ասոցիացիայի Փարիզ Սան ժերմանի ղեկավարները կը շարունակեն իրենց ճշունները բանեցնել սպանական երկու լաւագոյն ակումբ-

որերուն կը սպասուի, որ Ֆլորենթինո Փերեզ աշխուժացնէ բանակցութիւնները, փարիզեան ակումբին ներկայացնելով Խամես Էլ Զաբլը Նաւասի անունները: Անպաշտօն լուրերու համաձայն Զարիմ Պենզեմայի և Իսկի անունները եւս շրջանառութեան մէջ են, սակայն սոյն խաղացողներուն սպանական ակումբէն հեռանալու հաւանականութիւնը շատ քիչ է:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՄՔ ԶՈՒՅՆԻՈՆ ՄԻԱՅՍՒՄ ՊԱՅԵՐՆ ՄԻՈՒՆԻՏԻՆ

Պարսելոնայի ղեկավարներէն Զիլերնո Ամոր հաստատեց, որ խումբի



պրագիցի կիսապաշտպան Ֆիլիպ Զոթինիո յառաջիկայ տարեշրջանին մէկ տարուան համար տեղափոխուեցաւ գերմանական Պայերն Միւնխի: Սպանիոյ ֆուտբոլի մրցումներու ընթացքին բացակայեցաւ Զոթինիոն: Յիշենք, որ Յունուար 2018-ին Զոթինիոն Լիվըրփուլէն մեկնելով միացաւ Պարսելոնային՝ փոխան 145 միլիոն եւրոյի: Ան 76 մրցումներու ընթացքին նշանակած է 21 կոլ և կատարած 11 կոլերու փոխանցում: Ամոր պայմանագիրը սպանական խումբին հետ վերջ կը գտնէ 2023-ին:

ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՄՔ ՍԿՍՒՄ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերջին տասնմէկ տարիներու ընթացքին, առաջին անգամ ըլլալով Սպանիոյ ֆուտբոլի ասոցիացիայի Պարսելոնան պարտութեամբ կը սկսի ֆուտբոլի ասոցիացիայի մրցաշրջանը, 1 - 0 արդիւնքով գիշերով Աթլետիքո Պիլայուին: Յիշենք, որ 2008 - 2009 տարեշրջանի առաջին մրցումին Պարսելոնան 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Նոմանսիա խումբին: Մրցումին ընթացքին



Պարսելոնան տիրապետեց խաղարկութեան, բայց անոր բոլոր յարձակումները անարդիւնք արժանանալու համար անարժան էր: Խումբը տուժեց արժանանալու խաղացող Լիոնել Մեսսիի բացակայութենէն, իսկ Լուիս Սուարեզ վիրաւոր վիճակի մէջ հեռացաւ դաշտէն: Երկրորդ կիսախաղին, Պիլայուի մարզիկները կրցան տիրել դաշտին և վտանգի ենթարկել Զիլերնոյ դարպասը: 89-րդ վայրկեանին Արեթ Կալիֆ զեղեցիկ հարուածով մը ցնցեց քաղաքացիներուն դարպասը, և խումբին նուիրեց ֆուտբոլի ասոցիացիայի առաջին երեք կոլերը: Մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը իր դաշտէն դուրս յաջողեցաւ 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնել Սեթա Գիլոն: Մատրիտի կոլերը նշանակեցին Զարիմ Պենզեման Թոնի Զորը և Ֆասթեդ 12-րդ, 61-րդ և 80-րդ վայրկեաններուն, իսկ հիւրընկալ կազմին կոլը արձանագրեց Լոսատան 91-րդ վայրկեանին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Մարգիս Կիրակոսեան ընտանիքն ու զաւակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք ցաւակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՐԳԻՍ ԹԻՒՖԵՆՔՃԵԱՆԻ (Մայր Ծորճ)

մահուան սուգին, որ տեղի ունեցաւ 15 Օգոստոս 2019-ին Երեւան: Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 19 Օգոստոս 2019-ին:

Հանգուցեալին հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 1 Սեպտեմբեր 2019-ին, յարաւո Ս. և Աննահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Դալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունին Եկեղեցոյ ներքնասրահէն ներս:

Երկուշաբթի 26/8	Երեքշաբթի 27/8	Չորեքշաբթի 28/8	Հինգշաբթի 29/8	Ուրբաթ 30/8	Շաբաթ 31/8	Կիրակի 1/9
21° 39°	22° 38°	21° 37°	20° 37°	20° 36°	20° 35°	20° 36°

Սկիզբ՝ էջ 4

Ը) ԵՍԿԻՐԱՆԻ ՄԵՋ Ս. ԵՒ ԱՆՄԱՅ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՍԻՆՈՐԳՆԵՐ

Հանդիսապետութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Երկուշաբթի, 19 Օգոստոս 2019- ին, Եսկիրանի Ս. Աստուածածին մատրան մէջ Ս. Եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ:



Օրուան պատարագիչն էր Տէր Մաշտոց Աւագ Քահանայ Արապաթեան:

Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասը կատարեց պատարագին երգեցողութիւնը, իսկ Տէր Նարեկ Քահանայ Չերեկեցեան կատարեց սպասարկութիւնը:

Պատարագի աւարտին, շրջափակին մէջ, սօսիի ծառին ներքեւ, սրբազան հայրը կատարեց մատաղի, խաղողի եւ քլեղի օրհնութիւնը: Այնուհետեւ իր պատգամը տուաւ հարիւրաւոր հաւատացեալներու ներկայութեան:

Սրբազան հայրը Նախ պարզեց զոհաբերութեան նշանակութիւնը, դիտել տալով, որ զոհաբերութիւնը կը խորհրդանշէ մաքրութեամբ, ներողամտութեամբ եւ վերանորոգութեամբ յատկանշուող Նոր կեանքը:



Սրբազան հայրը մաղթեց, որ յանուն հայրենիքի իր կեանքը զոհող սուրիական բանակը եւս յաղթական աւարտէ իր պատերազմը եւ մենք բոլորս, մեր կարելիութիւնները ի սպաս դնելով սուրիական հայրենիքին, սատարենք անոր վերականգնումին:

Արարողութիւնը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» մաղթերգով: Ապա օրհնուած մատաղը, քլեղն ու խաղողը բարեմաղթութիւններով բաշխուեցան ներկայ հաւատացեալներուն:

Այս առիթով Եսկիրան ժամանած էին Նաեւ Լաթաքիայէն պետական բարձրաստիճան պատասխանատուներ: Լաթաքիոյ Նահանգապետի ներկայացուցիչը խօսք անելով շնորհաւորեց ժողովուրդը Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, ապա լուսարձակի տակ առաւ սուրիական բանակին այսօրեայ յաղթանակները, եւ Ս. Աստուածածնայ տօնին առիթով Եսկիրանի մէջ այս օրհնաբեր ներկայութիւնը ոգեշնչող երեւոյթ համարեց սուրիական բանակին նուաճումներուն ի տես:

Թ) Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ ԵԶՐԱՓՈՒՄԵՑՍԻՄ ԳՎՐԱՏՈՐԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ ՏԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ Ս. ԵՒ ԱՆՄԱՅ ՊԱՏԱՐԱԳՈՎ

Քեսապի մէջ Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը եզրափակուեցաւ Երեքշաբթի, 19 Օգոստոս 2019-ին, Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի հանդիսապետութեամբ տեղի ունեցած Ս. Եւ Անմահ Պատարագով:



Օրուան պատարագիչն էր Արժ. Տէր Նարեկ Քիւնյ. Չերեկեցեան: Ս. Եւ Անմահ Պատարագին իր մասնակցութիւնը բերաւ Արժ. Տէր Մաշտոց Քիւնյ. Արապաթեան: Արարողութեան ներկայ էին Նաեւ Ազգ. Վարչութեան անդամ Գուրգէն Գալուստեան եւ Քեսապի Հայ Կաթողիկէ Համայնքի վարդապետ Հոգեշնչորդի Հայր Նարեկ Լուիսեան:

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով կատարուած ուխտագնացութիւնը իր աւարտին հասաւ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի ուղղած պատգամով:

Սրբազան հայրը եզրափակելով ըսաւ, որ մեր բոլորին մաղթանքն է սուրիական բանակին յառաջխաղացքին իբրեւ արդիւնք ազատագրուած տեսնել Նաեւ Եագուպիէն եւ գալիք տարիներուն Ս. Աննայի տօնը յիշատակել տեղւոյն Ս. Աննա եկեղեցւոյ մէջ: Ապա աւելցնելով ըսաւ, որ մեր ուխտը կ'ամբողջանայ այն ատեն, երբ մենք կ'այցելենք Նաեւ այլ շրջաններու՝ Ճեզիրէի, Թէլ Ապիատի, Ղընեմիէի, Եագուպիէի եւ Տէր Չօրի մեր եկեղեցիները:

Պատարագի աւարտին հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ, որմէ ետք եկեղեցւոյ շրջափակին մէջ խաղողօրհնեքի արարողութեամբ եզրափակուեցաւ Վերափոխման տօնը:

Արարողութիւնները սփռուեցան «Ռատիօ Երագ» ի ուղիղ եթերով:

ՍԵՄ-Ի ԲԱՆԱԿՈՒՄԸ ՀԱՄԱՐՈՒՄ Է ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆ

Օգոստոս 8-ի գիշերն էր, բոլորս հաւաքուած ԱԲԵԾ-ի շրջափակին մէջ կը սպասէինք ՍԵՄ-ի տարեկան բանակումի մեկնումի ժամուն:

Ապրանքները հանրակառքին մէջ տեղաւորելէ ետք ճամբայ ելանք ու երկար ճամբորդութենէ ետք հասանք Դամասկոսի Սէլտնայա գիւղը, ուր Քեսապի փոխարէն տեղի պիտի

7 օրերու ընթացքին մենք սորվեցանք ընկերասիրութիւն, փոխադարձ յարգանք, հաւաքական աշխատանք հասկացութիւնները: Իսկ ամենակարեւորը՝ ծանօթացանք Նոր ընկերներու եւ վերջին վայրկեաններուն դժուարաւ բաժնուեցանք իրարմէ:

Բանակումի օրերը կ'անցնէին



ունենար ՍԵՄ-ի տարեկան բանակումը, նկատի ունենալով երկրի ապահովական պայմանները:

9 Օգոստոս 2019-ին սկիզբ առաւ ՍԵՄ-ի տարեկան բանակումը, որ նուիրուած էր ՍԵՄ-ի հիմնադրութեան 40-ամեակին: 2019 տարեթիւնը կը զուգահիւսէր Նաեւ Ռոստոմի մահուան 100-ամեակին, ուստի բանակումը կոչուեցաւ «Ռոստոմ»:

Այս տարի բանակումին կը մասնակցէին Հայլէպէն, Քեսապէն, Լաթաքիայէն եւ Դամասկոսէն 150 ընկեր-ընկերուի:

Բանակումին առաջին օրը բոլոր մասնակիցները բաժնուեցան խումբերու, իւրաքանչիւր խումբին մաս կը կազմէին գանազան մասնաճիւղեր եւ շըրջաններ ընկերներ: Սա առիթ ընծայեց, որ բանակող ընկեր-ընկերուիները ծանօթանան իրարու եւ մտերմանան:

Առաջին օրը բանակողներուն տրամադրուեցան գեղեցիկ գազակներ ու գլխարկներ:

Բանակումի ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը իւրաքանչիւր մասնաճիւղի յանձնած էր որոշ յայտագրեր, ինչպէս հարց-պատասխանի մրցում, դաշտային խաղեր եւ այլն...: Այս խաղերուն ընթացքին հաճելի մրցակցութեան մթնոլորտ մը կը ստեղծուէր խմբակներուն միջեւ:

Ստացանք բացառիկ եւ օգտաշատ դասախօսութիւններ եւ մասնակցեցանք գրոյցներու, որոնք անմիջական կապ ունէին մեր առօրեայ կեանքին հետ: Կազմապերպուեցան արշաններ եւ պտոյտներ՝ աւագ անագնացութիւն, Սէլտնայա ուխտավայր այցելութիւն եւ այլն:

Բանակողներէ կազմուած չորս յանձնախումբեր, կազմակերպեցին հրաշալի խարուկահանդէս մը, որմով եզրափակուեցաւ բանակումը:

շատ արագ: Ամէն օր լի ու լի կը գործադրէինք ճշդուած օրակարգի կետերը, կը պատրաստուէինք խարոյկի: Օր մըն ալ անդրադարձանք, որ հասած ենք բանակումին աւարտին, մեկնումի ժամն էր, իրաքանչիւր պիտի վերադառնար իր քաղաքը, սակայն քաղցր յուշերն ու բարեկամութիւնը պիտի ապրէին յաւերժ, իսկ մենք, հարստացած Նոր գիտելիքներով, Նոր մտածելակերպով պիտի ծրագրէինք մեր առօրեան:

Խարուկահանդէսը աւարտած էր: Ունեինք քանի մը ժամ միասին



արեւածագը դիմաւորելու, որպէսզի «Ռոստոմ» բանակումի փակման արարողութիւնը կատարէինք:

Հասաւ մեր բոլորին անցանկալի պահը՝ բաժանումը, երբ առաջին օրը ծանօթացանք չէինք պատկերացներ, որ բանակումի աւարտին արցունքոտ աչքերով պիտի բաժնուինք իրարմէ:

Հասաւ մեկնելու ժամը, ընդունելի չէր մեզի համար ամբողջ տարի մը սպասել կրկին հանդիպելու համար, այդուհանդերձ յուզումնախառն ուրախութեամբ մէկս միւսին ցտեսութիւն ըսինք՝ յաջորդ տարուան բանակումին կրկին տեսնուելու եւ անկրկնելի պահեր ապրելու յոյսով:

Այս բոլոր առաւելութիւնները յիշելով չմոռնանք մեր խոհարարը՝

Անժելա Չաղլասեան եւ Աւօ Պողոսեան
Շար.՝ էջ 12 ➔